

**«Հրազդանի անտառատեսություն» մասնաճյուղի
2023 – 2032թթ. կառավարման պլան»
հիմնադրության փաստաթղթի նախագծի**



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
(լրամշակված)**

**ՁԵՌՆԱՐԿՈՂ՝
«Ուայդ Գեյթ» ՍՊԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ ՇՄ նախարարության Անտառային կոմիտե**

ԵՐԵՎԱՆ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկողի անունը եվ գտնվելու վայրը.....	3
Հիմնադրությախն փաստաթյահի գործունեության անվանումը եվ նպատակը	3
1. Օրենսդրական դաշտ	3
2. Ամփոփ նախարան.....	11
3. Հիմնադրությախն փաստաթյահի ենթակա տարածքի համառոտ նկարագիրը եվ իրադրության սխեման.....	13
3.1 Անտառանտեսության տեղադրությունը.....	13
3.2 Տարածքի կազմավորում	13
3.3 Հրազդանի անտառանտեսության սահմանները	15
3.4 Լեռնագրության, ռելիէֆի և հողերի բնութագրեր	16
3.5 Կլիման.....	17
3.6 Զրագրությունը.....	23
3.7 Բուսական և կենդանական աշխարհը	25
3.8 Բնության հատուկ պահպանվող տարածքները	33
4. Անտառանտեսության անտառի բնութագրերը	36
4.1 Անտառի կատեգորիաներ.....	36
4.2 Անտառների գնահատման մեթոդ	36
4.3 Անտառանտեսության հողերի դասակարգում	38
5. Անտառային հողերի բնութագիրը	39
5.1 Անտառանտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի	39
5.2 Անտառային հողերի և փոփոխությունն ըստ հողատեսքերի	41
Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների	42
«Արզական-Մեղրաձորի» արգելավայրի տարածքի ընդհանուր բնութագիրը	51
6. Անտառօգտագործում	56
6.1 Բնափայտային անտառօգտագործում	56
6.2 Ոչ բնափայտային անտառօգտագործում	61
7. Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն	62
8. Սոցիալ-տնտեսական հետազոտություններ	64
8.1 Ընդհանուր տեղեկություններ	64
8.2 Բնակչության սեռատարիքային բաշխվածքը	66
8.3 Աշխատանքային միջացիա	67
8.4 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը	68
8.5 Տրանսպորտային ծառայություններ	68
8.6 Այլ ենթակառուցվածքներ	69
8.7 Աշխատուժ, զբաղվածություն և եկամուտներ	69
8.8 Գյուղատնտեսություն	70
8.9. Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում	70
9. Անտառվերականգնման միջոցառումներ	71
9.1. Անտառաճեցման պիտանելիության դասակարգում	72
9.2. Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ	73
9.3. Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները	74
10. Պահպանություն անտառային հրդեհներից	78
11. Էկոհամակարգային ծառայությունների գնահատում	80
11.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում	80
12. Տեղեկատվություն հանրային ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ	84
13. Հավելվածներ	85

Ձեռնարկողի անունը ԵՎ գտնվելու վայրը

Նախատեսվող փորձաքննական գործընթացում, որի նախնական փուլի մեջնարկի նպատակով մշակվել և ներկայացվում է սույն Նախնական գնահատման հայտը, որպես ձեռնարկող հանդես է գալու «Ուայդ Գեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը գտնվում է ք. Երևան, Գևորգ Քոչար 21 հասցեում:

Հիմնադրութային փաստաթղթի գործունեության անվանումը ԵՎ նպատակը

Հիմնադրութային փաստաթղթի անվանումն է «Հրազդանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի 2023 – 2032 թթ կառավարման պլան»-ի նախագիծ: Փաստաթղթի նպատակն է Հրազդանի անտառոտնտեսության մասով անտառաշինության արդյունքների մշակումը և այդ անտառոտնտեսության վարումը: «Հրազդանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի համար իրականացված անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարման նպատակով կազմվել են համապատասխան նախագծեր, որոնք տալիս են անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

1. Օրենսդրական դաշտ

Հայաստանի Հանրապետության Սահմանդրության 10-րդ հոդվածը (1995թ.) սահմանում է. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»: 1991թ. անկախության ձեռք բերելուց հետո, Հայաստանի Հանրապետությունը մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր ընդունեց, ինչպես նաև մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ ստորագրեց և ընդունեց այդ պարտավորությունն իրականացնելու համար: Այդուսակում ներկայացված են կառավարման պլանի մշակման և հետագա իրականացման տեսանկյունից շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող մի շարք ՀՀ օրենքներ:

Օրենքի անվանումը	Ընդունման տարին
«Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքը	1991
«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը	2006
«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը	1994
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը	2014

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» <u>ՀՀ օրենքը</u>	1998
«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» <u>ՀՀ օրենքը</u>	1998
«Բուսական աշխարհի մասին» <u>ՀՀ օրենքը</u>	1999
«Կենդանական աշխարհի մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2000
«ՀՀ հողային օրենսգիրը»	2001
«ՀՀ ընդերքի օրենսգիրը»	2002
«ՀՀ ջրային օրենսգիրը»	2002
«Շափոնների մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2004
«Բնապահպանական վերահսկողության մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2005
«Անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգը հաստատելու մասին» <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանը</u>	10.08. 2005 N 130-Ն
Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի վնասի հատուցման սակագների մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2005
«Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2005
«Անտառային ծառատեսակների հատման տարիքը սահմանելու մասին» <u>ՀՀ կառավարության որոշումը</u>	11.09. 2005 N 1546-Ն
Զրի ազգային ծրագրի մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2006
«Անտառների պետական մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» <u>ՀՀ կառավարության որոշում</u>	25.01.2007 N 198-Ն
«Խնամքի և սանիրարական հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» <u>ՀՀ կառավարության որոշումը</u>	2006
«Հողօգտագործման և պահպանության վերահսկողության մասին» <u>ՀՀ օրենքը</u>	2008

«Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմնաքնների մասին» օրենքն ուրվագծում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության քաղաքականությունը: Դրա նպատակն է ապահովել հանրապետության տարածքում շրջակա միջավայրի պահպանության և օգտագործման պետական կանոնակարգումը: Այն անհրաժեշտ իրավական հիմքեր է սահմանում շրջակա ընդերքի, անտառների, ջրային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ու մթնոլորտային օդի պահպանությունն ու օգտագործումը կարգավորող բնապահպանական օրենսդրության մշակման համար: Այս օրենքը նաև յուրաքանչյուր քաղաքացու շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ հուսալի տեղեկություն պահանջելու և ձեռք բերելու իրավունք է շնորհում:

«Բնության հարուկ պահպանվող բարածքների մասին» օրենքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև որանց կառավարման ընթացակարգերը: Օրենքը սահմանում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքների

չորս տեսակ՝ (ա) պետական արգելոցներ, (բ) պետական արգելավայրեր, (գ) ազգային պարկեր և (դ) բնության հուշարձաններ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» օրենքը բաղկացած է Հայաստանի Հանրապետությունում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի ստանդարտ քայլերից: Օրենքի 4-րդ հոդվածի 1 մասի 6 կետի հիմնադրութային փաստաթուղթ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարութային, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները՝ ռազմավարական գնահատման և փորձաքննության ենթակա են սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, բնապահպանության, ռեկրեացիայի, սպասարկման, անտառատնտեսության, թափոնների օգտագործման, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրութային փաստաթղթերը:

«Պարմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքը իրավական և քաղաքականության հիմքեր է ստեղծում ՀՀ տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման և կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը նկարագրում է հուշարձանների բացահայտման և պետական գրանցման ընթացակարգերը, դրանց շուրջ պահպանման գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է նախքան հուշարձաններ պարունակող հողատարածքները շինարարական, գյուղատնտեսական և այլ տիպի գործունեություն իրականացնելու համար հատկացնելը ստանալ լիազորված մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն) հավանությունը:

«Բուսական աշխարհի մասի» և **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքները սահմանում են Հայաստանի Հանրապետության բուսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտդության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականություն: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:**

«Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994, լրամշակվել է 2007թ.), կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային

տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական իրապարակներում աղմուկի թույլատրելի սանհիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

<<< Հողային օրենսգիրք>>-ը սահմանում է էներգետիկայի, ջրային տնտեսության (ջրամատակարարում, ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ և այլն) և այլ նպատակներով հատկացվող հողերի օգտագործման հիմնադրույթները: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքների տակ գտնվող հողերը, ինչպես նաև անտառածածկ, ջրածածկ և պահուատային հողերը: Այն նաև սահմանում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

<<< Ընդերքի օրենսգիրքը>> այլի հետ մեկտեղ, սահմանում է հանքային ռեսուրսների և ստորերկրյա ջրերի օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները, ներառյալ՝ ստորերկրյա ջրային ռեսուրսների սանհիտարական պահպանության գոտիները:

Ջրային օրենսգրքի հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների ապահովման համար իրավական հիմքերի ապահովումը:

<<Թափոնների մասին>> **<<օրենքը** սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական եւ տնտեսական հիմքերը: Օրենքը նաև սահմանում է ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

<<Բնապահպանական վերահսկողության մասին>> **<<օրենքը** կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ առնչվող հարցերը և սահմանում Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը: Շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը կառավարող գործող օրենսդրական դաշտը ներառում է բազմաթիվ իրավական ակտեր: <<Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների իրականացման հիմնական իրավական լծակներն են հանդիսանում: Բնապահպանական ոլորտը նոյնականացնելու համար կարգավորում է <<նախագահի, վարչապետի և նախարարների որոշումներով և հրամաններով:

<<Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> **<<օրենքը** սահմանում է Հայաստանի հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության, ռազմավարական կառավարման և օգտագործման երկարաժամկետ զարգացման հայեցակարգը: Այն հստակեցնում է երկրի ջրային ոլորտի համապարփակ կառավարման և պլանավորման առանցքային սկզբունքները՝ սահմանելով առաջնահերթ խնդիրներն ու մոտեցումները:

<<< Անդրառային օրենսգիրքը>> կարգավորում է անտառների պահպանությունը, պաշտպանությունն ու կառավարումը:

<<Զրի ազգային ծրագրի մասին>> <<օրենքի հիմնական նպատակն էր սահմանել Զրային օրենսգրքով, Զրի ազգային քաղաքականությամբ և Ծրագրով սահմանված հիմնանպատակներին և խնդիրներին համար նախատեսված կարճաժամկետ (մինչև 2010), միջնաժամկետ (2010-2015) և երկարաժամկետ (2015-2021) միջոցառումները:”Զրի ազգային ծրագրի մասին՝ օրենքը “դինամիկ” փաստաթուղթ է, որը պետք է կանոնավոր կերպով նորացվի:

Օրենքով սահմանվող առանցքային միջոցառումների թվում են՝

գմիջոցառումների մշակում, որոնց նպատակն է սահմանել ազգային Զրային պաշարը, ռազմավարական Զրային պաշարը, օգտագործելի Զրային ռեսուրսները և ազգային Զրային պաշարի ավելացումն ու պահպանությունը, Զրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության Զրային համակարգերը սահմանելու համար չափանիշների սահմանումը,

գԶրի պահանջարկի և առաջարկի գնահատում,

գԶրային ռեսուրսների կուտակման/պահուստավորման, բաշխման և օգտագործման ռազմավարության մշակում,

գմիջոցառումների սահմանում՝ ուղղված Զրային նորմերի մշակմանը, Էկոլոգիական/նվազագույն թողքի ծավալի և սպառման համար վերցվող Զրի առավելագույն թույլատրելի քանակությունների որոշմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների և արտակարգ Էկոլոգիական իրավիճակների և աղետների գոտիների սահմանմանը, Զրային Էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, Զրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավմանը և աղտոտման կանխարգելմանը,

գԶրի ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսական պահանջների և առաջարկվող ֆինանսավորման աղբյուրների սահմանում,

գհանրության տեղեկացվածության ապահովում և այլն:

<<Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին>> <<օրենքը ապահովում է Հայաստանի Հանրապետության հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողությունը և պետական լիազորված մարմինների իրավասությունները, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հակառակության Հողային ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

Ի լրացում վերոնշյալ օրենսդրական ակտերի, Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող մի շարք կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնք ներկայացվում են ստորև:

Ընդգծվածներն ամենաշատն են առնչվում սույն հիմնադրության փաստաթղթերի հետ:

	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագր վել է	Վավերաց վել է	Առնչ վում է ծրագ րին	Ծանոթություն
1	Կոնվենցիա միջազգային նշանակության գերխոն տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայրեր (Ուանսար, 1971)	1975	1993	Հաստատ վել է ԽՍՀՄ-ի կողմից	x	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (ՈՒՆ դե ժանեյրո, 1992)	1993	1992	1993	x	Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1993թ.
3	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն (Կարթագենա, 2000)		2000	2004		
4	Կիմայի փոփոխության մասին ՍԱԿ-ի շրջանակա կոնվենցիան (Եյու Յորք, 1992)	1994	1992	1993		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1993թ.
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)			2002		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 2003թ.
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժենեվա, 1979)	1983		1996		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1997թ.
7	Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (Էսպո, 1991) Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին արձանագրություն (Կիև, 2003)	1997		1996	x	Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1997թ
8	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (<Ելսինկի, 1992) Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի հանար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)	2000		1996		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1997թ.
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՍԱԿ-ի կոնվենցիան (Փարիզ, 1994)	1996	1994	1997	x	Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1997թ.
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային վերահսկման և դրանց տեղափոխման նկատմամբ հսկողության սահմաննան մասին կոնվենցիա (Բագել, 1989)	1992		1999		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1999թ.
11	Օգնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1988		1999		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1999թ.

	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանում վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագր վել է	Վավերաց վել է	Առնչ վում է ծրագ րին	Ծանոթություն
	Օգոնայի շերտը քայլայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1989		1999		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 1999թ.
12	Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998)	2001	1998	2001	x	
13	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա, (Ուոտերդամ, 1998)		1998	2003		
14	Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսք օգտագործման և պահպանության մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992)	1996	1999		x	
15	Զրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)		1999		x	
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ տեսակի թշնամական օգտագործումը արգելելու մասին կոնվենցիա (Ժենեվա, 1976)	1978		2001		Վերագրանցվել է ՍԱԿ-ում 2002թ.
17	Լանդշաֆտների Եվրոպական կոնվենցիան (Ֆլորենսիա, 2000)			2004		
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)			1993	x	
19	Էներգետիկ խարտիայի համաձայնագիր (Լիսբոն, 1994)			1997		
20	Էներգետիկ արդյունավետության և դրան առնչվող շրջակա միջավայրի համապատասխան հարցերի մասին էներգետիկ խարտիայի արձանագրություն (Լիսաբոն, 1994)			1997		
20	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	1982	2006		x	

Բացի վերը ներկայացված օրենքները և միաջազգային կոնվենցիաներն ու արձանագրությունները, «Հրազդանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի 2023 – 2032 թթ կառավարման պլան» փաստաթղթի մշակման ու հետագա իրականացման շրջանակներն առնչվում են ստորև թվարկված ենթաօրենսդրական ակտերին.

- << կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին << կառավարության 29.01.2010թ. ի N71-Ն որոշում,
- << բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին << կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
- << կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
- << կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
- << կառավարության 31.07.2014թ.-ի հոլիսի 31-ի «<< բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- << կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

2. Ամփոփ նախաբան

Հրազդանի տարածաշրջանի անտառներում անտառշինական աշխատանքներ առաջին անգամ իրականացվել են 1940 թվականին և կրկնվել 1952, 1962, 1972, 1982 և 1990 թվականներին:

Անտառային կոմիտեի և Ուայր Գեյլ ՇՊԸ միջև 2022թ. փետրվարի 3-ին կնքվել է պայմանագիր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառունտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի պատրաստման վերաբերյալ:

Պայմանագրի համաձայն իրականացվել է.

• Հրազդանի նախկին անտառկառավարման պլանների գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,

• կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,

• անտառունտեսության տարածքում գետերի քանակի և ծգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

• ծրագրի տարածքում բնակչության գբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

• ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,

• նախորդ անտառշինության պլանշետների, անտառձառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,

• ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,

• անտառունտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,

• անտառսերմնային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

• հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

Անտառգույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Անտառի գույքագրման գործողություններն իրականացվել են երկու խմբերով, հիմնական կազմում ընդգրկված են նաև օգնականներ անտառունտեսությունից:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, քարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և սահմանագատման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվելեն Forest Book համակարգային ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնել դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծել բազմանպատակային USC տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է Forest Book-ի անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագրեր, որոնք օգտագործվել են թեմատիկ քարտեզների կազմման համար:

Գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառտնտեսության հետ:

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման իրահանգի (2005թ), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառշինական խորհրդակցությունները:

Առաջին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է Հրազդանի անտառտնտեսության տնօրենի կողմից 2022թ. փետրվարի 16-ին անտառտնտեսության գրասենյակում, քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, կայացվել է համապատասխան որոշումներ:

Անտառշինական առաջին խորհրդակցությունը կազմակերպվել է Անտառային կոմիտեի կողմից 2022թ. ապրիլի 15-ին Ծաղկաձոր քաղաքում՝ Հայաստանի գրողների միության ստեղծագործական միության խորհրդակցության սրահում: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության և անտառշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունը ու այլ հարցեր:

2022թ մայիսի 20-ին անտառտնտեսության գրասենյակում անց է կացվել Երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը, տեղամասերի ցանկը, որտեղ նշանակված են հիմնական անտառտնտեսական միջոցառումներ և այլ խնդիրներ:

Երկրորդ անտառշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո 2022թ. սեպտեմբերի 16 -ին Ծաղկաձոր քաղաքում՝ Հայաստանի գրողների միության ստեղծագործական միության խորհրդակցության սրահում: Քննարկվել են՝

- Անտառային ֆոնդի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,
- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,
- անտառօգտագործման ծավանները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական և անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,
- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավանները,
- անտառսերմնային տնկարանային տնտեսության կազմակերպումը,
- անտառների հակահրդեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,
- կողմնարդյունքի (ոչ բնակայտային հումքի պաշարների) գնահատումը:

3. Հիմնադրութային փաստաթղթի ենթակա տարածքի համառոտ նկարագիրը եվ իրադրության սխեման

3.1 Անտառտնտեսության տեղադրությունը

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի անտառտնտեսությունն ընդգրկում է Կոտայքի մարզի և մայրաքաղաք Երևանի վարչական տարածքում գտնվող անտառային հողերը: Անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Հրազդան քաղաքում, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 50կմ: Անտառտնտեսությունից հյուսիս գտնվում է Արագածոտնի անտառտնտեսությունը, հյուսիս-արևելքից «Սևան» ազգային պարկը: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 63կմ է, իսկ արևելքից արևմուտք՝ շուրջ 23կմ:

3.2 Տարածքի կազմավորում

Հրազդանի անտառտնտեսությունը կազմավորվել է 1931թ.: Մինչև 1950թ. անտառտնտեսությունը կոչվում էր Երևանի, 1950-ից մինչև 1962թ.¹ Կոտայքի, իսկ 1962թ. հետո՝ Հրազդանի անտառտնտեսություն:

1988թ դեկտեմբերի 8-ի ՀՍՍՀ ՄԽ թիվ 646 որոշման համաձայն Հրազդանի անտառտնտեսությանն է միացվել Ապարանի անտառտնտեսությունը, որը «Հայանտառ» 24.11.1989թ թիվ 282 իրամանով կրկին առանձնացվել է, և Հրազդանի անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմել է 19365 հեկտար:

Համաձայն Հրազդանի անտառտնտեսության 1990թ կառավարման պլանի, անտառտնտեսության տարածքը կազմել է 19365հա:

2007թ մարտի 26-ի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի թիվ 20 իրամանով Նախի, Արգնի և Կոտայքի անտառպետությունների միացումից հետո սահմանվել է Հրազդանի անտառտնտեսության կառուցվածքը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի 10.06.2009թ թիվ 15 իրամանով, անտառի պահպանությունն ուժեղացնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, Հրազդանի անտառտնտեսության կառուցվածքում կրկին փոփոխություն է կատարվել. Բուժականի անտառպետության տարածքը միացվել է Արգականի անտառպետությանը,

իսկ Նախրիի և Կոտայքի անտառապետությունները վերակազմավորվել են, և միացվել Արգնիի անտառապետությանը: Վերջին տարիներին, ինչպես նշվեց, անտառատնտեսությունում կառուցվածքային և մակերեսային փոփոխություններն են տեղի ունեցել, ընդ որում ոչ միայն կառուցվածքային փոփոխությունների, այլ նաև անտառային հողերի սահմանների ճշտման, համայնքների վարչական սահմաններում անտառայի հողատեսքերի՝ տնտեսության կազմում ընդգրկելու հետևանքով(այսուսակ1):

Այլուսակ 1 Անտառատնտեսության կառուցվածքը

№	Անտառապետության անվանումը	1990		2009թ ըստ «Հայանտառի» տվյալների		2022թ	
		հա	%	հա	%	հա	%
1	Մեղրաձորի	6762	35	6762	29,6	7235	29,2
2	Ծաղկաձորի	3953	20	4792	21	4016	16,2
3	Արգականի	7711	40	9726	42,6	8201	33,1
4	Հրազդանի	939	5	-	-	-	-
5	Բուժականի	-	-	-	-	1968	8,0
6	Արգնիի	-	-	1560	6,8	2440	9,9
7	Երևանի	-	-	-	-	403	1,6
8	Էրեբունու	-	-	-	-	468	2,0
Ընդամենը		19365	100	22840	100	24731	100


2015թ Հրազդանի անտառատնտեսությանն է միացել Երևանի անտառատնտեսությունը (այլուսակ 2):

Այլուսակ 2 Նախկին Երևանի անտառատնտեսության կազմավորման տարեգրությունը

№	Անտառապետության անվանումը	1973թ.		1983թ.		1998թ.		2006թ.		2009թ	
		հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%
1	Բյուրականի	2382	46.1	2804	54.8						
2	Հոկտեմբերյանի	287	5.6	308	6.0						
3	Երևանի	694	13.4	553	10.7	471	20.1	157.7	25.4	152.9	25.5
4	Սարդարապատի	300	5.8	246	4.8						
5	Սովետաշենի	431	8.3	176	3.4						
6	Արագածի	1076	20.8								
7	Աշտարակի			340	6.6						
8	Էջմիածնի			278	5.4						
9	Սովետականի			203	4						
10	Շահումյանի			209	4.1						
11	Արգնիի					415	17.7				
12	Կոտայքի					680	29.1				
13	Նուբարաշենի					172	7.3	127.7	20.6	111	18.5
14	Էրեբունու					606	25.8	336.5	54	336.2	56
Ընդամենը		5170	100	5117	100	2344	100	619.9	100	600.1	100

3.3 Հրազդանի անտառտնտեսության սահմանները

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև արբանակային պատկերների վերծանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ներկայիս սահմանները: «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի իրադրության սխեման ներկայացված է ստորև՝ Նկ. 1-ում.



Նկար 1. «Հրազդանի անտառություն» մասնաճյուղի իրադրության սխեմա

3.4 Լեռնագրության, ռելիէֆի և հողերի բնութագրեր

Անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են Փամբակի լեռնաշղթայից հարավ, Գեղամա լեռնաշղթայից հյուսիս-արևմուտք, Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա, Կոտայքի սարավանդին և Արարատյան գոգավորության բարձրադիր շրջաններում: Հիմնական մասը գտնվում է Մարմարիկ և Դալար գետերի ավազաններում: Անտառտնտեսության տարածքին բնորոշ են բարձրադիր լեռները, ռելիէֆի հրաբխային ու էրոզիոն ձևերը, սարավանդներն ու գետահովիտները: Հյուսիսային մասում ձգվում են Փամբակի լեռնաշղթայի՝ Մարմարիկ գետի վլուակներով խիստ մասնատված լանջերը, իսկ արևելքում Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերը, հարավային սահմանները հասնում են Կոտայքի սարավանդն է և Արարատյան դաշտին, իսկ արևմուտքում տարածվում է խիստ կտրտված լանջերով Ծաղկունյաց լեռնաշղթան, որից սկսվում և դեպի արևելք է ձգվում Թեղենիսի լեռնաբազուկը: Ռելիէֆի բնորոշ տարրերից են Հրազդանի և Մարմարիկի հովիտները: Ցածրադիր մասում ռելիէֆը մեղմ ալիքավոր է, ծածկված հրաբուխներից արտավիժած լավաներով: Տարածքի ամենաբարձր գագաթը Թեժ լեռն է՝ 3101մ:

Բնակիմայական պայմաններից են ելուվ՝ խիստ փոփոխական է հողային բնութագիրը: Անտառտնտեսության առանձին տեղամասերն իրենց հողաերկրաբանական պայմաններով խիստ տարբերվում են: Համաձայն հանրապետության հողային քարտեզագրական նյութերի անտառտնտեսության ցածրադիր մասերում գերիշխում են կարբոնատային գորշ, լեռնաշագանակագույն հողերը, որոնց զարգացման համար բնորոշ են շոգ, սակավ խոնավապահովված կլիմայական պայմանները և աչքի են ընկնում սակավ հումուսայնությամբ: Այս հողերի համար հատկանշական է միջին կլանման ծավալը, թույլ հիմնային ռեակցիան, կարբոնատների և քարերի զգալի պարունակությունը: Տնտեսության անտառածածկ տարածքներում գերակշռող են մուգ դարչնագույն, գորշ հողերը, որոնք առավելապես տարածված են հարավային կողմնադրության լանջերին: Այս հողերն աչքի են ընկնում հորիզոնի թույլ, առանձին դեպքերում չափավոր զատորոշմամբ, վերին հորիզոնի չափավոր հումուսացվածությամբ (4-6%), միջին կլանողականությամբ, չեղոք կամ թույլ հիմնային ռեակցիայով, զարգանում են չափավոր տաք, փոփոխական խոնավություն ունեցող կլիմայական և ծառաթփատեսակներով հարուստ կաղնու անտառային ծածկոցի պայմաններում:

Անտառտնտեսության տարածքներում գերակշռողը մուգ անտառային հողերն են, որոնք մեծամասամբ տարածված են հյուսիսային կողմնադրության լեռնալանջերին: Այս հողերն ունեն միջին և ավելի մեծ կլանունակություն, ծանր մեխանիկական կազմ, չեղոք կամ չեղոքին մոտ ակտիվ ռեակցիա: Աչքի են ընկնում փոքր ծավալային կշռով, բարձր ծակոտկենությամբ ու խոնավունակությամբ:

Այստեղ հարավային կողմնադրության լանջերին առավելապես տարածված են մուգ դարչնագոյն հողերը: Այս հողերն ունեն փոքր, հազվաբեր միջին հզորություն, և իրենց կառուցվածքով կարելի է դասել գորշ հողերի տիպին:

3.5 Կլիման

Անտառունտեսության տարածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող 11 ագրոկլիմայական գոնաներից 4-ը՝ չոր-խիստ ցամաքային, չոր ցամաքային, չափավոր ցուրտ անբավարար խոնավությամբ, չափավոր խոնավ:

Կլիման, կախված ուղղաձիգ գոտիականությունից, բազմազան է չոր, չափավոր ցամաքայինից մինչև բարեխսառն լեռնային և ցուրտ լեռնային կլիմայական գոտի:

Անտառունտեսության տարածքի ընդամենը 10%-ն է գտնվում չափավոր չոր և չափավոր ցամաքային կլիմայական գոտիներում, որտեղ բնորոշ են տաք, չոր ամառները, և կարճատև ցուրտ ձմեռները: Այս շրջաններում անտառների գոյատևումը հնարավոր է դառնում մեծամասամբ արհեստական ռողոման շնորհիվ:

Չոր, խիստ ցամաքային կլիման ընդգրկում է Արարատյան գոգավորության մինչև 1000մ բարձրությունները: Զմեռը ցուրտ է, գերակշռում են սառնամանիքային եղանակները, հունվարին օդի միջին ջերմաստիճանը -4°C է, նվազագույնը՝ -33°C : Հաստատուն ծնածածկույթ առաջանում է ոչ ամեն տարի: Գարունը կարճատև է, մեղմ, ամառը՝ տևական (4-5 ամիս), շոգ, չոր՝ արևոտ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոսին օդի միջին ջերմաստիճանը 26°C է, առավելագույնը՝ 42°C : Աշունը մեղմ է, տևական, տաք՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակաշրջանը 230 օր է, 0°C -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 4600°C , տարեկան տեղումները՝ մինչև 300 մմ:

Չոր ցամաքային կլիման ծևավորվում է Արարատյան գոգավորության 1400-1500մ բարձրություններում: Զմեռը չափավոր ցուրտ է՝ անկայուն ծնածածկույթով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը $-4\text{-}5^{\circ}\text{C}$ է, նվազագույնը՝ -34°C : Գարունը մեղմ է, համեմատաբար՝ խոնավ: Ամառը շոգ է, արևոտ՝ չոր եղանակների գերակշռությամբ, սկսվում է մայիսի սկզբին: Հուլիս-օգոստոսին օդի միջին ջերմաստիճանը 23°C է, առավելագույնը՝ 41°C : Աշունը մեղմ է, արևոտ՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակաշրջանը 200-220 օր է, 0°C -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 4300°C , տարեկան տեղումները՝ 350-400 մմ:

Չափավոր-ցամաքային անտառաճման շրջանն ընդգրկում է մինչև 1500-1800մ բարձրությունները: Զմեռը երկարատև է, ձյունառատ, միջին ջերմաստիճանը -7.4°C է: Գարունը բավականին ցուրտ է, վերջին ցրտահարությունները նկատվում են մայիսի սկզբին: Գարնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը 5.0°C է: Ամառը չափավոր տաք է, երկարատև, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 34°C : Աշունը տաք է, երկարատև: Աշնան առաջին ցրտահարությունները դիտվում են հոկտեմբերի սկզբին:

Չափավոր խոնավ լեռնատափաստանային անտառաճման շրջանն ընդգրում է 1800-2000մ ընկած տարածքները: Տարեկան տեղումների քանակը 600մմ է: Այս

շրջանում ձմեռը չափավոր ցուրտ է, միջին ջերմաստիճանը՝ -6°C : Ոչ սառնամանիքային օրերի թիվը 144 է, ծյունառաւ օրերի թիվը՝ 131: Կայուն ծնածածկոյթ ձևավորվում է դեկտեմբերի սկզբին: Գարունը երկարատև է, չափավոր ցուրտ, ձմեռային եղանակի հաճախակի վերադարձով (մարտը փաստացի համարվում է ձմեռային ամիս): Գարնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը 3.3°C -ը չի գերազանցում: Ամառը չափավոր շոգ է, կարճատև: Ամռան բացարձակ առավելագույն ջերմաստիճանը չի գերազանցում 32°C -ը:




Մարմարիկ գետի ավազանը հանդիսանում է առանձին անտառաճման շրջան: Մարմարիկ գետի ավազանի շրջանը զբաղեցնում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև գտնվող տարածքը՝ Մարմարիկ գետի հովիտը:

Կլիման այստեղ բավականին խիստ է, և համեմատաբար խոնավ՝ տարվա բոլոր եղանակներին: Տարեկան տեղումների քանակը կազմում է 800մմ: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը իջնում է մինչև -31°C : Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 5°C է: Ամռանը տիրապետող են հյուսիսային, տարվա մյուս եղանակներին՝ արևմտյան քամիները: Քամիների միջին արագությունը 3-4մ/վ է: Օդի միջին հարաբերական խոնավությունը 65% է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կլիմայական բնութագրերի վրա երբեմն ուղղակի ազդեցություն ունի նաև մթնոլորտային օդի որակը, այս բաժնում ներկայացվել են նաև մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի ելակետային արդյունքները՝ 2023թ-ի փետրվար ամսվա դրությամբ, օգտվելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում հասանելի տեղեկատվությունից:

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնը մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 1 անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:



Կլիմայական բնութագրի քաղվածք ՀՀԸՆ Բ-7.01-2011 փաստաթղթից

(«Հրազդան», «Արգնի», «Եղվարդ», Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանների տվյալները օդի շերմաստիճան, հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամի կլիմայական տարրերի համար)

Միջին ջերմաստիճանը-Հրազդան

Բնակավ այրի/օդ. կայանի անվանու մը	Բարձրու թյունը ծովի մակարդ ակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բաց արձ նվա գ. °C	Բացա րձ. Առավ ել. °C
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Հրազդան	1765	-8,0	-6,4	-2,0	5, 0	10,1	13,8	17,2	17,2	13,5	7,5	1,3	-5,0	5,4	-32	35

Միջին ջերմաստիճանը-Արգնի

Բնակավ այրի/օդ. կայանի անվանու մը	Բարձրու թյունը ծովի մակարդ ակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բաց արձ նվա գ. °C	Բացա րձ. Առավ ել. °C
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արգնի	1262	-4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.7	22.3	22.3	18.2	11.5	4.9	-1.3	9.7	-28	38

Միջին ջերմաստիճանը-Եղվարդ

Բնակավ այրի/օդ. կայանի անվանու մը	Բարձրու թյունը ծովի մակարդ ակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բաց արձ նվա գ. °C	Բացա րձ. Առավ ել. °C
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39

Միջին ջերմաստիճանը-Երևան-Էրեբունի

Բնակավ այրի/օդ. կայանի անվանու մը	Բարձրու թյունը ծովի մակարդ ակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բաց արձ նվա գ. °C	Բացա րձ. Առավ ել. °C
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան, Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12. 5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը-«Հրազդան»

Օդ-կայան	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												Միջին տարեկան ստարեկա նամենացուրտ ամսվա	Միջին ամսական ժ. 15-ին ամենացուրտ ամսվա	Բացա րձ. Առավ ել. °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Հրազդան	81	78	74	70	69	69	67	64	64	69	76	79	72	69	46

Օդի հարաբերական խոնավությունը-«Արգնի»

Օդ-կայան	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												Միջին տարեկան ստարեկա նամենացուրտ ամսվա	Միջին ամսական ժ. 15-ին ամենացուրտ ամսվա	Բացա րձ. Առավ ել. °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արգնի	78	74	67	65	64	58	53	49	57	65	74	79	65	-	-

Օդի հարաբերական խոնավությունը-«Եղվարդ»

Օդ-կայան	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												Միջին տարեկան ստարեկա նամենացուրտ ամսվա	Միջին ամսական ժ. 15-ին ամենացուրտ ամսվա	Բացա րձ. Առավ ել. °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

Օդի հարաբերական խոնավությունը-Երևան «Էրեբունի»

Օդ-կայան	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		տարեկան ամենացուրտ ամսվա	ամենատաք ամսվա
Երևան, Էրեբունի	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը -«Հրազդան»

Օդ-կայան	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												Տարեկան	Տամայություն	Ծանօթա առավելագույնը	Ծանօթա օրերի թիվը								
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12												
«Հրազդան»	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310	-	-	-	-	-	-	-	-
	40	47	44	52	52	42	47	42	49	64	45	34	64	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը-«Արգնի»

Օդ-կայան	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												Տարեկան	Տամայություն	Ծանօթա առավելագույնը	Ծանօթա օրերի թիվը								
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12												
«Արգնի»	34	43	44	58	77	40	25	16	26	34	40	38	475	-	69	-	-	-	-	-	-	-	-	-
	14	20	23	33	30	24	30	23	42	25	19	39	42	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը-«Եղվարդ»

Օդ-կայան	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												Տարեկան	Տամայություն	Ծանօթա առավելագույնը	Ծանօթա օրերի թիվը								
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12												
«Եղվարդ»	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156	-	-	-	-	-	-	-	-
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Երևան «Էրեբունի»

Օդ-կայան	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												Տարեկան	Տամայություն	Ծանօթա առավելագույնը	Ծանօթա օրերի թիվը								
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12												
Երևան «Էրեբունի»	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47	-	-	-	-	-	-	-	-	-
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Քամի-«Հրազդան»

Օդ-կայան	Մթնո լորտսա յին ճնշու մը ԳԴԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ									Անհող մությու ն սերի կրկնել ի ություն ը %	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Ուժեղ քամի ներով (>15 մ/վրկ)	Քամու հաշվար- կային արագու- թյունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում					
			ըստ ուղղությունների																		
			հս.	հս. արևել յան	արևել յան	հվ. արևել յան	հվ.	հվ. արև մբռ յան	արև- մբռ յան	հս. արև- մբռ յան	հս. արև- մբռ յան										
«Հրազդան»	823,2	1	2/2,3	5/2,4	11/2,0	4/1,4	19/1,9	39/2,3	18/2,4	2/1,7	27	1.9	2,1	18	19	22	24				
		4	4/2,3	14/2,7	19/2,2	6/1,8	13/1,9	21/2,3	20/2,4	3/2,0	15	2.1									
		7	8/3,5	45/3,2	35/2,9	2/1,9	2/2,0	3/1,9	4/2,4	1/2,2	7	2.8									
		10	36/1,6	3/1,6	2/1,0	2/1,5	46/1,7	8/2,1	1/1,8	2/1,5	26	1.7									

Քամի-«Արգնի». Շինարարական կիմայաբանություն ՀՀԸ 11-7.01-2011» (http://www.mud.am/laws/files/26_10_11_h.pdf) նորմատիվային փաստաթյուում «Արգնի» օդերևութաբանական կայանի համար քամու տվյալները բացակայում են

Քամի-«Եղվարդ»

Օդ-կայան	Մթնո լորտսա յին ճնշու մը ԳԴԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ									Անհող մությու ն սերի կրկնել ի ություն ը %	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Ուժեղ քամի ներով (>15 մ/վրկ)	Քամու հաշվար- կային արագու- թյունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում						
			ըստ ուղղությունների																			
			հս.	հս. արևել յան	արևել յան	հվ. արևել յան	հվ.	հվ. արև մբռ յան	արև- մբռ յան	հս. արև- մբռ յան	հս. արև- մբռ յան											
«Եղվարդ»	866,0	1	6/1,7	48/1,8	11/1,7	3/1,5	15/1,7	6/1,9	9/1,8	2/1,7	40	1.1	2,6	29	24	29	34					
		4	5/3,0	48/3,8	7/2,7	3/2,4	17/2,4	10/2,8	8/2,7	2/2,1	23	2.6										
		7	6/4,9	73/5,5	4/4,9	1/1,7	7/3,0	4/2,5	4/3,0	1/1,8	11	4.8										
		10	5/2,7	55/3,1	6/2,1	3/1,9	16/1,9	8/2,3	6/1,8	1/2,2	31	1.9										

Քամի-Երևան «Էրեբունի»

Օդ-կայան	Մթնո լորտսա յին ճնշու մը ԳԴԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ									Անհող մությու ն սերի կրկնել ի ություն ը %	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Քամու միջին տարե կան արա գու- թյունը մ/վրկ	Ուժեղ քամի ներով (>15 մ/վրկ)	Քամու հաշվար- կային արագու- թյունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում						
			ըստ ուղղությունների																			
			հս.	հս. արևել յան	արևել յան	հվ. արևել յան	հվ.	հվ. արև մբռ յան	արև- մբռ յան	հս. արև- մբռ յան	հս. արև- մբռ յան											
Երևան «Էրեբունի»	912,1	1	4/2,2	9/2,2	11/2,2	14/2,9	21/2,7	25/2,3	12/2,6	4/2,7	76	0.7	1,5	29	22	27	29					
		4	7/3,1	14/3,2	8/2,8	16/4,0	20/3,1	16/3,0	13/3,8	6/3,6	45	1.9										
		7	17/5,2	28/5,7	4/2,8	9/2,7	17/2,4	13/2,7	8/2,9	4/4,3	36	2.8										
		10	6/2,9	18/2,5	10/2,1	10/2,5	21/2,3	20/2,4	10/2,9	5/3,5	63	1.0										

3.6 Հրագրությունը

Անտառունտեսության տարածքով հոսող ամենամեծ գետը Հրազդանն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից: Երկարությունը 141 կմ է, ավազանը՝ 2560 կմ², խոշոր վտակը՝ Մարմարիկ գետն է, վտակներից է նաև Դալար գետը: Հրազդան գետի ջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով, որի հետևանքով գետի բնական ծախսը մշտապես փոփոխվում է կապված Սևանա լճից ջուր բաց թողնելու հետ: Հրազդան գետի վրա կառուցվել է Էլեկտրակայանների կասկադ՝ Սևանի, Աթարբեկյանի, Գյումուշի, Արգնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը:

Մարմարիկ գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայից, հոսում հյուսիսարևմուտքից հարավ-արևելք և Զրառատ գյուղի մոտ միանում Հրազդան գետին: Ունի խառը սնում, հորդանում է գարնանը: Երկարությունը՝ 42կմ, ավազանը՝ 427 կմ²:

Տարածքի համեմատաբար խոշոր գետերից կարելի է նշել Ծաղկաձորը, Արգետը, Զրվեժը:

Աղյուսակ 3. Հրազդան և Մարմարիկ գետերի բնութագիրը

№	Գետի անվանումը	Ծախսը մ ³ /վ	Տարեկան հոսքը մլn.մ ³	Հոսքի մոդուլը լ/վ կմ ²	Հոսքի գործակիցը	Հոսքի շերտի բարձրությունը մմ	Տրանսպորտ պիտանելիությունը
1	Հրազդան	22.6	714	9.78	0.47	308	ոչ պիտանի
2	Մարմարիկ	5.2	164	13.4	0.57	422	ոչ պիտանի

Մարմարիկ գետի վերին հոսանքում կառուցվել է Մարմարիկի ջրամբարը: Խոշոր ջրամբաներ են Հրազդան գետի վրա կառուցված Հրազդանի ջրամբարը և Երևանյան լիճ ջրամբարը:

Տարածքում խոշոր լճեր և ճահճուտներ չկան: Արգելավայրի տարածքը հարուստ է հանքավան, Արգնի, Բջնի:




Անտառկառավարման պլանի մշակման աշխատանքների առաջադրանքներում տարածքի մակերևութային ջրերի որակի ուսումնասիրության վերաբերյալ առաջադրանք չի եղել, սակայն ուսումնասիրվել են հասանելի պաշտոնական ելակետային տվյալները (վերցված << շրջակա միջավայրի նախարարության հիդրոներևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքից): Ըստ այդ տվյալների, ստորև ներկայացվում է Հրազդանի ջրավազանային տարածքի Հրազդանի տարածաշրջանի գետերի/մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը՝ 2022թ-ի 4-րդ եռամսյակի դրությամբ:

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում

հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), իսկ Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Հրազդան գետի որակի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ նկարագրական գրաֆիկը.

×



Տարածաշրջանի այլ գետեր վերաբերյալ գրաֆիկական պատկերներ ներկայացված չեն, քանի որ վերը հիշատակված պաշտոնական աղյուղի կայքում 2022թի դեկտեմբերի դրությամբ հրապարակված գրաֆիկական պատկերները հասանելի են եղել միայն Հրազդան գետի համար:

3.7 Բուսական և կենդանական աշխարհը

Շնորհիվ բնակիմայական ուրույն պայմանների, անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում բուսական համայնապատկերի արտակարգ հարստությամբ: Այստեղ հանդիպում են անոթավոր բույսերին 63 ընտանիքին 122 ցեղին պատկանող 508 տեսակ: Բույսերից 3 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

Աղյուսակ 4 Հրազդանի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները

Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
<i>Nectaroscordum tripedale</i>	Նեկտարոսցորդում եռառտնաչափ	EN
<i>Najas minor</i>	Ջրահարս փաքր	VU
<i>Ophioglossum vulgatum</i>	Օֆիոգլոսում	CR

Անտառտնտեսության տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (32 տեսակ), մեղրատու (44), դեղատու (56), կերային (64) նշանակության տեսակները:

Անտառտնտեսության տարածքում հիմնականում հանդիպում են կաղնի, կաղնիթխուտային և խառը ծառուտները: Գերակշռող ծառատեսակներն են արևելյան կաղնին (*Quercus macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus Caucasică*), սրապտուղ հացին (*Fraxinus Excelsior*), դաշտային թխկին (*Acar Camrestra*), մանրատերև լորին (*Tilia Cordata*), անտառային կաղամախին (*Populus Tremula*), Լիտվինովի կեչին (*Betula Litwinowii*): Հանդիպում են նաև կովկասյան տանձենին (*Pyrus Caucasică*), տերևաշատ թեղին (*Ulmus Foliacea*), սրատերև թխկի (*Acar Platanoides*) և այլ ծառատեսակներ:

Ենթանտառը թույլ արտահայտված տեսք ունի: Թփատեսակներից հանդիպում են իլենի/*Euonymus L.*), հաղարջենի (*Ribes L.*), չմենի (*Cotoneaster Medic.*), գերիմաստի (*Viburnum Lantana L.*), ծորենի (*Berberis L.*), ասպիրակ (*Spiraea L.*), ցախակեռաս (*Lonicera L.*) և այլն:

Գիհու ծառուտները հանդիպում են աղքատ, քարքարոտ հողերի վրա:

Անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում բուսատեսակների բազմազանությամբ: Տարածված են տարախոտազգիները, փետրախոտերը, շյուղախոտերը, հացազգիները:

Թեև Հրազդանի անտառտնտեսության տարածքում գերակշռում են անտառային էկոհամակարգերը, սակայն բազմաթիվ բաց տարածքների առկայությունը ստեղծում է այստեղ ապրելավայրերի զգալի բազմատարրություն, որը ապահովում է անողնաշար կենդանիների բարձր բազմազանությունը: Այսպես, տարածքից հայտնի է գնայուկ

բզեզների (Carabidae) ավելի քան 60 տեսակ, երկարաբեղիկների (Cerambycidae)¹ 76 տեսակ, թերթիկաբեղավորների (Scarabaeidae) մոտ 50 տեսակ, ցերեկային թիթեռների (Lepidoptera-Rhopalocera) ավելի քան 60 տեսակ:

Բազմաթիվ են նաև Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակները, որոնցից այստեղ գտնվել է 19 տեսակ:

Կարմիր գրքի բզեզները միայն երկուսն են՝ Հայաստանի Էնդեմիկ տեսակներ, որոնք հանդիպում են անտառի վերին եզրի մոտ՝ Շամբակուրծք թարախահանը (*Mylabris sedilithorax*) (EN, Հայաստանի Էնդեմիկ) և Երևանյան սևամարմինը (*Cylindronotus erivanus*) (EN, Հայաստանի Էնդեմիկ), որը Հայաստանում պահպանվում է միայն այստեղ:

Տարածքում գտնվել են ցերեկային թիթեռների 6 տեսակ, այդ թվում մնեմոզինան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne*) (VU), ապոլոնը (*Parnassius apollo*) (VU), ալեքսանոր առագաստաթիթեռը (*Papilio alexanor orientalis*) (VU), ավորինա դեղնաթիթեռը (*Colias aurorina*) (VU), ալկոն (*Maculinea alcon monticola*) (VU) և արիոն (*Maculinea arion zara*) (VU) կապտաթիթեռները:

Լուսի վրա արգելավայրում գալիս են արոգերպինա իլիկաթիթեռը (*Proserpinus proserpina*) (VU) և այլ ԲՀՊՏ-ներում չպահպանվող Ալեքսանդրի երկրաչափիթեռը (*Eupithecia alexandriana*) (EN, Հայաստանի Էնդեմիկ):

Տարածքը հարուստ է նաև Կարմիր գրքում գրանցված թաղանթաթևերով (Hymenoptera): Դրանք են վայրի մեղվազգիներ (*Apoidea*) ամրակազմ մեղուն (*Anthophora robusta*) (VU), մանուշակագույն մեղու-ատաղձագործը (*Xylocopa violacea*) (VU), իշամեղուներ մարգագետնային (*Bombus pratorum*) (VU), գետնային (*Bombus terrestris*) (VU), Պորչինսկու (*Bombus portshinskii*) (VU), Կովկասի տարածաշրջանի Էնդեմիկ) և դաղեստանյան (*Bombus daghestanicus*) (VU), Կովկասի տարածաշրջանի Էնդեմիկ) և մրցունների 3 տեսակ. կիսատամ (*Crematogaster subdentata*) (EN), ինչպես նաև Հայաստանում միայն այստեղ պահպանվող Ռավագինիի (*Myrmica ruginosii*) (EN) և Զովիայի (*Diplorhoptrum juliae*) (CR, Հայաստանի Էնդեմիկ) մրցուններ, վերջինս նկարագրված է «Արգական-Մեղրածորի» արգելավայրի տարածքից և աշխարհում հայտնի է միայն այստեղից:

Արգելավայրի ձկնաշխարհը ներկայացված է Մարմարիկ և Դալար գետերի ավազանում բնակվող հետևյալ ձկնատեսակներով՝ կարմրախայտով (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկով (*Alburnoides eichwaldii*), Քուտի բեղլուով (*Barbus lacerta cyri*), կողակով (*Capoeta sp.*), արծաթափայլ կարասով (*Carassius auratus gibelio*): Կարող են հանդիպել նաև Քուտի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), անգորական լերկաձուկը (*Oxynevacheilus angorae*), ինչպես նաև ֆորելային տնտեսություններից ներթափանցող ծիածանախայտը (*Parasalmo mykiss*):

Նախկինում կարմրախայտը Մարմարիկ գետի և նրա մեջ թափվող վտակների բազմաքանակ տեսակներից էր, որը մեծ նշանակություն ուներ տեղի բնակչության սննդակարգում և հանդիսանում էր ձկնորսության օբյեկտ: Այսպես, Մարմարիկի 1 կմ

Երկարություն ունեցող հունից անցած դարի 30-50-ական թվականներին որսվել է ոչ քիչ քանակության կարմրախայտ: Ներկայումս այդ ձկնատեսակի գլխաքանակը գտնվում է ոչնչացման եզրին՝ տարբեր անթուլատրելի միջոցներ օգտագործելով /Էլեկտրականություն, թունավոր նյութեր, այլն/ գիշատչական գերորսի, ինչպես նաև գետի կենցաղային թափոններով աղտոտման և գյուղատնտեսական նպատակներով ջրառի արդյունքում:

Արևելյան տառեխիկը ներկայում Մարմարիկ գետի ամենաքազմաքանակ ձկնատեսակն է, կողակը՝ սովորական: Քուտի բեղլուն սակավաթիվ է և մեծ քանակով չի հանդիպում:

Մարմարիկ գետի հունի վրա արհեստական ջրամբարի կառուցումը նպաստում է արծաթափայլ կարասի գլխաքանակի մեծացմանը և արեալի ընդարձակմանը:

Արգելավայրում հանդիպում են 4 տեսակի երկենցաղներ՝ կանաչ դոդոշը (Bufo viridis), սովորական ծառագորտը (Hyla arboreas chelkownikowii), լճագորտը (Pelophilax ridibundus) և փոքրասիական գորտը (Rana macrocnemis):

Բնակավայրերի միջև ընկած հատվածներում ավտոմայրուղու եզրերին, ճանապարհամերձ ժայռերի և շինությունների պատերի վրա հանդիպում են Darevskia gavettii ժայռային մողեսներից հայկական մողեսը, Դալլի մողեսը և ռոստոմբեկովի մողեսը (Darevskia armeniaca, D. dahl(EN): i, D. rostombekovi (EN)): Այս կուսածին տեսակներից առավել խոցելին, կապված կենսաբանական առանձնահատկությունների հետ (ձվերի քիչ քանակությունը և էկոլոգիական նեղ հարմարողականությունը) հանդիսանում է Ռոստոմբեկովի ժայռային մողեսը, որը գրանցված է << կենդանիների Կարմիր գրքում: Դալլի ժայռային մողեսը նոյնպես գրանցված է << կենդանիների Կարմիր գրքում, սակայն թվաքանակը ավելի մեծ է: Մարմարիկ գետի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու տեսակներ՝ Դալլի (D. dahl(EN):) և հայկական (armeniaca,) մողեսները: Անտառի եզրերին, քաց տարածություններում հազվադեպ հանդիպում է մարգագետնային մողեսը (*D. praticola*) (VU), որը գրանցված է << կենդանիների Կարմիր գրքում:

Լեռնատափատանային և անտառային գոտու բացատներում ոչ մեծ քանակությամբ հանդիպում են ճարպիկ մողեսը (Lacerta agilis), և շերտավոր մողեսը (L. strigata): Անտառի եզրին և բացատներում հանդիպում է ջարդվող իլիկամողեսը (Anguis fragilis): Գետերի առափնյա քարքարոտ տեղամասերում և ճանապարհի վրա, հանդիպում են նաև ծիթեպտղագոյն սահնօձը (Platyceps najadum) և բազմագույն սահնօձերը (Hemorrhois raverdieri): Անտառային բացատների քարքարոտ տեղամասերում հազվադեպ կարելի է հանդիպել նաև << կենդանիների Կարմիր գրքում գրանցված անդրկովկասայն սահնօձին (*Zamenis hohenackeri*) (VU): Տարբեր ջրաճահճային էկոհամակարգերում գրանցվել է ջրային լորտուն (Natrix tessellata):

Այս կուսածին տեսակներից առավել խոցելին, կապված կենսաբանական առանձնահատկությունների հետ (ձվերի քիչ քանակությունը և էկոլոգիական նեղ հարմարողականությունը) հանդիսանում է Ռոստոմբեկովի ժայռային մողեսը, որը

գրանցված է << կենդանիների Կարմիր գրքում: Դայի ժայռային մողեսը նույնպես գրանցված է << կենդանիների Կարմիր գրքում, սակայն թվաքանակը ավելի մեծ է: Աղստև գետի առափնյա ժայռերի վրա տարածված է նաև ժայռային մողեսներից հայկական մողեսը *Darevskia armeniaca*:

Մողեսների առանձին տեսակների հարաբերական քանակությունը և փոփոխությունը (թվաքանակի աճը), որսանմուշներում վկայում է հազվագյուտ տեսակների պոպուլյացիաների վրա ֆոնային տեսակների բացասական ազդեցության, մարդածին ճնշման նվազեցման (ապօրինի որս), էկոհամակարգի կայունության, որպես կերի աղբյուր միջատների, համապատասխան բիոտոպների և կլիմայական գործոնների նպաստավոր պայմանների առկայության մասին:

Նշված օբյեկտների մոնիտորինգը հնարավորություն կտա գնահատել հազվագյուտ տեսակների վրա ֆոնային տեսակների և մարդածին ճնշման աստիճանը: Այսպես օրինակ, Ռոստոմբեկովի ժայռային մողեսի (*Darevskia rostombekovi*) թվաքնակի աճը վկայում է պոպուլյացիայի վրա Հայկական ժայռային մողեսի (*Darevskia armeniaca*) ճնշման նվազեցման, որպես կերի աղբյուր միջատների, համապատասխան բիոտոպների և կլիմայական գործոնների նպաստավոր պայմանների առկայության մասին, իսկ Ռոստոմբեկովի ժայռային մողեսի թվաքնակի կրճատումը վկայում է պոպուլյացիայի վրա Հայկական ժայռային մողեսի թվաքանակի աճի (բացասական ազդեցության) և վերը նշված պայմանների ոչ նպաստավոր լինելու մասին, որտեղ գոյատևում են ավելի լայն հարմարվողականություն ունեցող/պլաստիկ տեսակները: Այսինքն ֆոնային տեսակների պոպուլյացիաների բացասական ազդեցության մասին:

Սոլունաբանական տեսակետից «Արգական-Մեղրաձորի» արգելավայրը հարուստ է սոլունների տեսակներով: Արգելավայրում հանդիպող 28 տեսակներից 8-ը գրանցված են << Կարմիր գրքում: Հազվագյուտ և անհետացող տեսակներից կարելի է նշել Չերնովի մերկաչքին (*Ablepharus chernovi*), առաջավորասիական մարույան (*Trachylepis septemtaeniata*), Երկարավոր սցինկին (*Eumeces schneideri*), անդրկովկասյան սահնօծին (*Zamenis hohenackeri*), կովկասյան կատվաօծին (*Telescopus fallax*), Երևանյան լեռնա տափաստանային իժին (*Pelias erivanensis*) և հայկական իժին (*Montivipera raddei*):

Արգելավայրի տարածքում տարվա տարբեր սեզոններին գրանցվել են մոտ 120 տեսակի թռչուններ: Դրանցից առավել հետաքրքրիներից են այստեղ բնադրվող Հայաստանի Կարմիր գրքում գրանցված սապսանը (*Falco peregrinus*) (VU), մարգահավը (*Crex crex*) (VU), փոքր Ենթաարծիվը (*Aquila pomarina*) (VU), ինչպես նաև այստեղ հանդիպող Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում գրանցված կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU) և կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD):

Արգելավայրը հանդիսանում է Կովկասյան մարեհավի (*Tetrao mlokosiewiczi*) (VU) հիմնական ապրելավայրը:

Թռչուններից Հրազդանի անտառտնտեսության տարածքում հանդիպում է շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը այստեղ բնադրում են: Թռչունների 36 տեսակը գրանցված

Են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Գրանցված է Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որորը (*Larus armenicus*): Տարածքում բնադրող թռչունների մեծամասնությունը ներկայացված է անտառային տեսակներով: Այստեղ լայն տարածված են հոբալը (*Columba oenas*), անտառային աղավնին (*Columba palumbus*), փայտփորների վեց տեսակ՝ վիզգցուկը (*Jynx torquilla*), կանաչ (*Picus viridis*), սև (*Dryocopus martius*), խայտաբղետ (*Dendrocopos major*), միջին (*D. medius*) և փոքր (*D. minor*) փայտփորները, եղնջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), անտառային նրբագեղիկը (*Prunella modularis*), արշալուսիկը (*Erythacus rubecula*), սովորական կարմրատուտը (*Phoenicurus phoenicurus*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*), սև (*T. merula*) և երգող (*T. philomelos*) կեռնեխները, սևագլուխ (*Sylvia atricapilla*) և այգու (*S. borin*) շահրիկները, դեղնափոր (*Phylloscopus trochiloides*) և ծնկլտան (*Ph. collybita*) գեղգեղիկները, փոքր (*Ficedula parva*) և կիսասպիտակավիզ (*F. semitorquata*) ճանճորսները, երկարագի (*Aegithalos caudatus*), սև (*Parus ater*), երկնագոյն (*P. caeruleus*) և մեծ (*P. major*) երաշտահավերը, սովորական սիտեղը (*Sitta europaea*), ծվծվիկը (*Certhia familiaris*) և անտառային կաչաղակը (*Garrulus glandarius*): Սերինոսներից լայն տարածված են ամուրիկը (*Fringilla coelebs*), կանաչ սերինոսը (*Carduelis chloris*), սովորական խաճկտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccotraustes*): Երեկոյան և գիշերային ժամերին անտառներում կարելի է հանդիպել անտառաբվին (*Strix aluco*) և ականջավոր բվին (*Asio otus*): Ցերեկային գիշատիչ թռչուններից այստեղ բնադրում են օձակեր արծիվը (*Circaetus gallicus*), կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորադրսը (*Accipiter gentilis*), լորաճուռակը (*A. nisus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) և գաճաճ արծիվը (*Hieraaetus pennatus*): Անտառամերձ բացատներում և մացառուտներում հանդիպում են այծկիթը (*Caprimulgus europaeus*), անտառակցցարը (*Scolopax rusticola*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), անտառային արտույտը (*Lullula arborea*), անտառային ծիաթռչնակը (*Anthus trivialis*), սևագլուխ չքչքանը (*Saxicola torquatus*), ճուռականման (*Sylvia nisoria*), մորու (*S. curruca*) և մոխրագոյն (*S. communis*) շահրիկները, կովկասյան գեղգեղիկը (*Phylloscopus sindianus*), ժուլանը (*Lanius collurio*), ոսպնուկը (*Carpodacus erythrinus*), կանեփնուկը (*Carduelis cannabina*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Գետերի հովիտների բաց ջրային տարածքներում և արհեստական լճակների ափերին հանդիպում են կարմրառու (*Tringa tetanus*), սևուկ (*T. ochropus*) և սպիտակավիզ (*Actitis hypoleucos*) կցցարները, երկնագոյն ալկիոնը (*Alcedo atthis*), լեռնային խաղտտնիկը (*Motacilla cinerea*) և ջրաճնճղուկը (*Cinclus cinclus*): Գետերի ափամերձ թփուտներում և ճահճուտներում բնադրում են հարավային սոխակը (*Luscinia megarhynchos*), լայնապոչ եղեգնաթռչնակը (*Cettia cetti*): Խոնավ մարգագետինները գրավում են դեղին խաղտտնիկին (*Motacilla flava*), շերտագլուխ (*Acrocephalus schoenobaenus*) և ճահճային (*A. palustris*)

Եղեգնաթոչնակներին և սովորական ճոխկահավին (*Locustella naevia*), ինչպես նաև այստեղ կեր հայթիայթող մեղվակերին (*Merops apiaster*) և առափնյա ծիծեռնակին (*Riparia riparia*): Առափնյա անտառին բնորոշ տեսակներից են արտոյտաբազեն (*Falco subbuteo*), մոխրագույն ճանճորսը (*Muscicapa striata*), ճոճահավը (*Remiz pendulinus*), պիրոլը (*Oriolus oriolus*) և սևաճակատ շամփրուկը (*Lanius minor*): Տարածքում գտնվող այգիները և մշակված հանդակները գրավում են հոպոպին (*Upupa epops*), սև մանգաղաթենին (*Apus apus*), գյուղական ծիծեռնակին (*Hirundo rustica*), սպիտակ խալտտնիկին (*Motacilla alba*), սովորական սարյակին (*Sturnus vulgaris*), սովորական ճային (*Corvus monedula*), մոխրագույն ագռավին (*Corvus corone*), դաշտային (*Passer montanus*) և տնային (*P. domesticus*) ճնճղուկներին, կարմրակատարին (*Carduelis carduelis*) և կորեկնուկին (*Emberiza calandra*): Ամենուրեք հանդիպում են քարքարոս ելքեր, ժայռեր իսկ ջրբաժանների կատարների երկայնքով՝ նաև ժայռաբեկորների թափվածքների դաշտեր: Ցածրադիր գոտու ժայռերում հանդիպում են գիշանգող (*Neophron percnopterus*), բվեճը (*Bubo bubo*), ներկարարը (*Coracias garrulus*), թխակապուտ աղավնին (*Columba livia*), ժայռային (*Ptyonoprogne rupestris*) և քաղաքային (*Delichon urbicum*) ծիծեռնակները, սևախայտ քարաթռչնակը (*Oenanthe hispanica*), կապուտ քարակեռնեխը (*Monticola solitarius*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*), ժայռային ճնճղուկը (*Petronia petronia*), այգու (*Emberiza hortulana*) և լեռնային (*E. cia*) դրախտապանները: Բարձր լեռնային գոտու ժայռերին և մերձակա լեռնային տափաստաններին և մարգագետիններին բնորոշ են կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*), վայրի հնդկահավը կամ ովարը (*Tetraogallus caspius*), սովորական կկուն (*Cuculus canorus*), սպիտակափոր մանգաղաթենը (*Apus melba*), եղջրավոր արտուպուր (*Eremophila alpestris*), խայտաբղետ (*Prunella ocularis*) և ալպիական (*P. collaris*) նրբագեղիկները, կապտափող սոխակը (*Luscinia svecica*), սևուկ կարմրատուսը (*Phoenicurus ochruros*), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), կարմրաթե մագլցողը (*Tichodroma muraria*), սևագուավը (*Corvus corax*), կարմրակտուց ճայը (*Pyrrhocorax pyrrhocorax*), ծյանճնճղուկը (*Montifringilla nivalis*), կարմրաճակատ սերինոսը (*Serinus pusillus*) և լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*): Անմատչելի ժայռերը հատկապես գրավիչ են այստեղ բնադրող մի շարք ցերեկային գիշատիչ թռչունների՝ գառնանգողի (*Gypaetus barbatus*), սպիտակագլուխ անգողի (*Gyps fulvus*), տափաստանային ճուռակի (*Buteo rufinus*), քարարծվի (*Aquila chrysaetos*), սովորական հողմավար բազեի (*Falco tinnunculus*) և սապսանի (*F. peregrinus*) համար: Լեռնային մարգագետինների այլ տարածված տեսակներից են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), մարգահավը (*Crex crex*), դաշտային արտուպուր (*Alauda arvensis*), լեռնային ծիաթռչնակը (*Anthus spinolella*) և մարգագետնային չքչքանը: Գարնանային և աշնանային չուփ ժամանակ տարածքում կարելի է հանդիպել քազմաթիվ այլ տեսակների: Չվող գիշատիչ թռչուններից են՝ սև ցինը (*Milvus migrans*), սև անգող (*Aegypius monachus*), ճահճային (*Circus aeruginosus*), տափաստանային (*C. macrourus*) և

մարգագետնային (*C. pygargus*) մկնաճուռակները, Եվրոպական ճնճղաճուռակը (*Accipiter brevipes*), մեծ ենթաարծիվը (*Aquila clanga*), տափաստանային արծիվը (*A. nipalensis*), բլրային արծիվը (*A. heliacaca*), ջրարծիվը (*Pandion haliaetus*), տափաստանային հողմավար (*Falco naumanni*) և կարմրառու (F. *vespertinus*) բազեները, բալրանը (*F. cherrug*): Չվող ճնճղուկազգիներից են կարմրախածի ծիաթոչնակը (*Anthus cervinus*), կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*), վարդագույն սարյակը (*Sturnus roseus*), գարնանային գեղգեղիկը (*Phylloscopus trochilus*) և մի շարք այլ միջատակեր տեսակներ: Զրային թռչուններից չուի ժամանակ այստեղ հանդիպում են փոքր ջրցուվը (*Ixobrychus minutus*), սպիտակ փոքրը (*Egretta garzetta*), մոխրագույն (*Ardea cinerea*) և շիկակարմիր (*A. purpurea*) տառեղները, սև (*Ciconia nigra*) և սպիտակ (*C. ciconia*) արագիլները, փոքր քարադրը (*Charadrius dubius*), սովորական կիվիվը (*Vanellus vanellus*), մորակոցարը (*Gallinago gallinago*), ծխագույն կոցարը (*Tringa nebularia*), սովորական (*Larus ridibundus*) և հայկական (*L. armenicus*) որորները, սպիտակապայտ (*Chlidonias hybrida*) և սպիտակաթև (*Ch. leucopterus*) ջրածիծառները, դեղնագլուխ խաղտտնիկը (*Motacilla citreola*): Զմռան ամիսներին ցածրադիր գոտում հանդիպում են հյուսիսից այցելող ձմեռող տեսակներ, ինչպիսիք են՝ փոքր սուզակը (*Tachybaptus ruficollis*), դաշտային մկնաճուռակը (*Circus cyaneus*), թավշառու ճուռակը (*Buteo lagopus*), աղավնաբազեն (*Falco columbarius*), սինակեռնեխը (*Turdus pilaris*), դեղնագլուխ արքայիկը (*Regulus regulus*), մոխրագույն շամփրուկը (*Lanius excubitor*), սովորական սերինոսը (*Fringilla montifringilla*), ազնվասարեկը (*Carduelis spinus*), սովորական (*Emberiza citrinella*) և եղեգնուտի (*E. schoeniclus*) դրախտապանները: Հրազդան գետի կիրճում հանդիպում են հետևյալ տեսակները. փոքր ծկնկով - *Microcarbo pygmaeus* - հազվադեպ կիրճի ստորին հատվածում թափանցում է Երևանի ջրամբարի տարածքից, Եվրոպական ճնճղաճուռակ-*Accipiter brevipes* պարբերաբար բնադրում է, աղավնաբազե-*Falco columbarius*. հանդիպում է ձմռան ժամանակահատվածում, հայկական որոր-*Larus armenicus*. հանդիպում է ամբողջ տարին կիրճի ողջ երկարությամբ, սովորական տատրակ-*Streptopelia turtur*. բացակայում է Հայաստանի Կարմիր գրքից, բայց ներառված է IUCN-ի ցանկում՝ որպես խոցելի տեսակ: Վերջին տարիներին կիրճի տարածքում այն շատ հազվադեպ է հանդիպում, բվեճ-*Bubo bubo*- կիրճի տարածքում գիշերվա ժամերին պարբերաբար լսվում են այս տեսակի ձայները, կիսասպիտակավիզ ճանճորս-*Ficedula semitorquata*. հանդիպում է միայն գարնանային միզրացիայի շրջանում, կարմրաթև սիտեղ-*Tichodroma muraria*. - հազվադեպ հանդիպում է ձմռան ժամանակաշրջանում:

Կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում և հատկապես անտառների բացատներում ու անտառների և մարգագետինների միջև ընկած տարածքնորում: Տարածքից ներկայում հայտնի են մոտ 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում: Հիմնական բնակիչներն են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), թփութային դաշտամուկը (*Microtus majori*), անտառային քնամոլը (*Dryomys nitedula*), պոլչուկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus*

uralensis), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), պարսկական կամ կովկասյան սլյուտը (*Sciurus anomalus*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*) և գորշ արջը (*Ursus arctos*): Սովորական են այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառաբնակ չղջիկներն են լայնականց ծալքաշուրթ չղջիկը (*Tadarida teniotis*), փոքր իրիկնաշղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաշղջիկը (*Nyctalus noctula*), եվրոպական լայնականց չղջիկը (*Barbastella barbastellus*), անտառային կամ Նատուգիուսի փոքրաշղջիկը (*Pipistrellus nathusii*), գորշ ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*): Քարքարոտ վայրերում կարող են գրանցվել սրականց գիշերաշղջիկը (*Myotis blythii*) և եռագոյն գիշերաշղջիկը (*Myotis emarginatus*): Ասիական լայնականց չղջիկը-*Barbastella leucomelas* և սովորական երկարաթև չղջիկը *Miniopterus schreibersi* դիտվում են թոհքի ժամանակ մթնշաղին և գիշերը:

Մարգագետիններում և բացատներում լայնորեն տարածված են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles canescens*), քարակզաքիսը (*Martes foina*) և արջսը (*Mustela nivalis*):

Զրամերձ տարածքներում գրանցվում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*), բեղավոր գիշերաշղջիկը (*Myotis mystacinus*) և, հազվադեպ, ջրասամույրը (*Lutra lutra*):

Անթրոպոգեն տարածքներում սովորական են մոխրագոյն համստերը (*Cricetus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*), մոխրագոյն առնետը (*Rattus norvegicus*), սև առնետը (*Rattus rattus*): Շինություններում ապաստարան են գտնում մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*), ասիական լայնականց չղջիկը (*Barbastella leucomelas*), ուշաթոհք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*), թօռուկ փոքրաշղջիկը (*Pipistrellus pipistrellus*), գաճաճ փոքրաշղջիկը (*Pipistrellus pygmaeus*), մաշկեղակերպ փոքրաշղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգոյն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*):

Ամենուրեք տարածված են սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Սատունինի գորշատամը (*Sorex satunini* = *S. caucasica stavropolica*), Վոլնովսինի գորշատամը (*Sorex volnuchini*), փոքր խոլորդը (*Talpa levantis*) և գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են եվրոպական լայնականց չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): << Կարմիր գրքում նշված են ազնվացեղ եղերուն (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), ասիական լայնականց չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, գորշ ականջեղ չղջիկը, անտառակատուն, գորշ արջը (VU) և լայնականց ծալքաշուրթ չղջիկը (DD): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), թփուտային դաշտամուկը,

դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունինի և Վոլնովսինի գորշատամները (Կովկասի էնդեմներ):

Մոնիթորինգի ենթակա հիմնական խոշոր կաթնասուններ կարող են հանդիսանալ գորշ արջը (*Ursus arctos*), Եվրոպական լուսանը (*Lynx lynx*) և մոխրագոյն գայլը (*Canis lupus*), ինչպես նաև երկու խոշոր խոտակերներ՝ այծամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*):

Կենսաբազմազանության հիմնական վտանգներ: Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի ծառահատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Հիմնական վտանգներից է նաև անտառային հրդեհները, որոնք ազդում են թե՛ ուղակի՝ հատկապես ձվադրման շրջանում, թե՛ անուղակի՝ բնադրավայրերի ոչնչացման հետևանքով:

3.8 Բնության հատուկ պահպանվող տարածքները

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետությունում ԲՀՊՏ-ները դասկարգվում են 4 կատեգորիայի՝ պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր և բնության հուշարձաններ: ՀՀ Կոտայքի մարզում չկան պետական արգելոցներ և ազգային պարկեր, իսկ մարզում տեղակայված «Հրազդանի անտառունտեսություն» մասնաճյուղը ներառում է կամ հարակից է որոշ պետական արգելավայրերի, որոնց վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

1. «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 23.03.1981թ. N 148 որոշում 1981: ՀՀ կառավարության 17. 09.2009թ. N 1962-Ն որոշում
- Տարածք՝ 9350 հա:
- Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, Մարմարիկ գետի վերին հոսանքների ավազան ծ.մ. 2000-2100 մ.:
- Ստեղծման նպատակը՝ հանքային աղբյուրների սնման ավազանների պահպանություն:
- Գերատեսչական ենթակայությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ

2. «Արզականի և Մեղրաձորի» պետական արգելավայր

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը՝ ՀՍՍՀ ՍՍ 19.04.1971թ. N 212 հրահանգ
- Տարածքը՝ 13532 հա:
- Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզի Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններում, Արզականի և Մեղրաձորի անտառոտնտեսություններ, 1600-2100մ մ:
- Ստեղծման նպատակը՝ հազվագյուտ և արժեքավոր բուսակենդանական տեսակները՝ այժամի, գորշ արջի, մայրեհավի, հայկական իժ, իժալեզու սովորականը և նեկտարասկրդում երեքֆուտայինը և այլն:
- Գերատեսչական ենթակայությունը՝ << շրջակա միջավայրի նախարարություն, Անտառային կոմիտե, «Հայանտառ» ՊՈԱԿ:

3. «Բանքսի սոճու» պետական արգելավայր’

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 29.01.1959թ. N 20 որոշում:
- Տարածքը՝ 4 հա:
- Գտնվելու վայրը՝ Հրազդանի շրջանի Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերին,
- ծ.մ. 1800-2000մ մ:
- Ստեղծման նպատակը՝ բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակի պահպանություն:
- Գերատեսչական ենթակայությունը՝ << շրջակա միջավայրի նախարարություն, Անտառային կոմիտե, «Հայանտառ» ՊՈԱԿ:

Բացի վերը թվարկված պետական արգելավայրերը, << Կոտայքի մարզում տեղակայված են նաև ԲՀՊՏ համակարգում ընդգրկված մի շարք բնության հուշարձաններ: << կառավարության կողմից բնության հուշարձանների ցանկը հաստատվել է 14.08.2008թ-ի N 967-Ն որոշմամբ, որում ներառված են թվով 232 բնության հուշարձաններ: Վերջիններս դասակարգվում են 5 առանձին խմբերի: Ստորև ներկայացված են << Կոտայքի մարզի Հրազդանի և դրան հարակից տարածաշրջանների բնության հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ վերոհիշյալ դասակարգման խմբերի.

1. Երկրաբանական հուշարձաններ

NN	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Պեղլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Զարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ

2.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
3.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատուցներում, Հրազդան գետի ձախ ափին
4.	«Անանուն» քարե կոտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
5.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
6.	«Լեռնահովիտ» քարային կոտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արև, «Թեղիսարաբ» գյուղատեղիի մոտ

2. Զրաերկրաբանական հուշարձաններ

7.	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան)թաղամասի արև ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
8.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա

3. Զրագրական հուշարձաններ

Չկան

4. Բնապատմական հուշարձաններ

Չկան

5. Կենսաբանական հուշարձաններ

9.	«Ռելիկտային կրկես Քյորողլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
10.	«Ալյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
11.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արգնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Հարկ է նշել, որ այս փուլում հնարավոր չէ ներկայացնել հստակ տեղեկատվություն վերը ներկայացված ԲՀՊՏ-ներից «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղում չներառված, մասնաճյուղի տարածքի հետ տվյալ ԲՀՊՏ-ների առնչության կամ հեռավորության մասին, քանի որ դրանցից ոչ մեկը դեռևս բարտեզագրված չեն պետական լիազոր մարմնի կողմից, չկան հստակ սահմաններ և/կամ կոորդինատներ, որոնցով հնարավոր լինի իդենտիֆիկացնել տվյալ ԲՀՊՏ-ի առնչությունը «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքի հետ:

4. Անտառտնտեսության անտառի բնութագրերը

4.1 Անտառի կատեգորիաներ

Անտառտնտեսության կառավարման պլանի պատրաստման աշխատանքները կատարվել են համաձայն սույն ծրագրի տեխնիկական առաջարանքի, հիմք ընդունելով ՀՀ Անտառային Օրենսգիրքը (2005), որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում անտառներն ըստ իրենց նպատակային նշանակության դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Պաշտպանական նշանակության անտառներ, դրանք են՝

- ջրային օբյեկտների ջրապահապան գոտիների անտառները,
- բարձր թեքության (300-ից ավել) վրա գտնվող անտառները,
- անտառների վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ տարածքը,
- բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով,
- կիսաանապատային, տափաստանային, անտառտափաստանային գոտիներում աճող անտառները:

Հարուկ նշանակության անտառներ, դրանք են՝

- Բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,
- Քաղաքային և քաղաքամերձ անտառները,
- Ռեկրեացիոն և առողջարարական անտառները,
- Սահմանային, ռազմական նշանակության անտառները,
- Պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,
- Սանհիտարական գոտիները պահպանող անտառները:

Արդարական նշանակության անտառներ՝ դրանք են բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին: Արտադրական նշանակության անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է անտառշինական նախագծերի հիման վրա՝ միջանկյալ (խնամքի), սանհիտարական և անտառվերականգնման հատումների միջոցով, հատման տարիքի հիման վրա և կատարվում է անտառի կենսաբանական առանձնահատկությունների բարելավման նպատակով՝ ապահովելով շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունների կանխարգելումը:

4.2 Անտառների գնահատման մեթոդը

Անտառների ընդհանուր գույքագրումն իրականացվել է համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների մշակման

հրահանգի, ընտրելով աչքաչափային-չափողական մեթոդը, որը հիմնված է բնականում անտառի աչքաչափային, ընտրողական չափողական և հաշվարկային գնահատման համատեղմանը: Համաձայն հրահանգի 1հա ընդլայնական հատույթների մակերեսների չափման համար տեղադրվել են ռելասկոպիկ և շրջանաձև հաշվարկային հրապարակներ GPS-ով որոշել կոորդինատները:

Անտառի հիմնական էլեմենտի և առավել ներկայացված տեսակների միջին բարձրությունները հատվածում որոշվել է գործիքային չափումներով՝ 3-5 միջինին մոտ ծառերի համար և տարիքային բուրով որոշվել է նրանց տարիքը:

Հատվածում ծառուտի կազմի որոշման հիմքը հանդիսանում է ըստ տեսակների հաշվարկված ընդլայնական հատույթների մակերեսների մեծությունը, իսկ ծառուտի կազմի բոլոր տեսակների ընդլայնական հատույթների մակերեսների գումարը՝ ծառուտի լրիվության որոշման համար:

Անտառի գնահատման բոլոր ցուցանիշները, անկախ կիրառվող մեթոդի, գրանցվում են գնահատման քարտում, որը հանդիսանում է հիմնական դաշտային փաստաթուղթը, ընդ որում այն լրացվում է գնահատման յուրաքանչյուր անտառային հատվածի համար: Հաշվի առնելով լեռնային անտառների հանգամանքը, անտառի հիմնական ցուցանիշներից բացի գրանցվել են նաև ծովի մակերեսությունը միջին բարձրությունը, լանջերի թեքությունը, հատվածի տեղադիրքը, հողի պաշտպանության և էրոզիայի աստիճանը, արժեքավոր և ռելիկտային տեսակները և այլն: Լանջերի բաժանումն ըստ թեքության աստիճանի կատարվել է համաձայն լեռնային պայմաններում հատումների կատարման գործող կանոնների:

Լանջերն ըստ թեքության բաժանվում են թեթև զարիվայր՝ մինչև 10° , զարիվայր՝ $11-20^{\circ}$, կտրուկ՝ $21-30^{\circ}$ և խիստ կտրուկ՝ 30° -ից բարձր:

Շարահարկերի բաժանումը կատարում են հետևյալ պայմաններում.

1. յուրաքանչյուր շարահարկի լրիվությունը պետք է լինի ոչ պակաս $0,3$,
2. շարահարկերի միջին բարձրության տարբերությունը պետք է կազմի ոչ պակաս 20% ,
3. շարահարկի միջին բարձրությունը կազմում է վերին շարահարկի բարձրության ոչ պակաս $1/4$ -ը:

Պարզ ծառուտներում տեսակային կազմը կամ բարդ ծառուտներում շարահարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ անտառկազմող տեսակի պաշարից (անտառի էլեմենտ) և գրանցվում է ֆորմովայով, որտեղ բերվում են յուրաքանչյուր ծառատեսակի կրճատ նշանակումը և յուրաքանչյուրի մասնակցության բաժինը ծառուտի կազմում՝ արտահայտված գործակցի տեսքով (ամբողջ թվով), որում յուրաքանչյուր միավորը համապատասխանում է 10% մասնակցության չափի՝ ընդհանուր պաշարում:

Ծառատեսակը, որի պաշարը կազմում է մինչև $2-5\%$ ծառուտի ընդհանուր պաշարից (շարահարկ), գրվում է ֆորմովայի կազմում + նշանով:

Միջին տարիքը որոշվում և գրանցվում է անտառկազմող յուրաքանչյուր տեսակի համար գնահատման քարտերում: Ծառուտի տարիքը հանդիսանում է գերակշռող տեսակի տարիքը:

Բոնիտետային դասը որոշվում է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ):

Հարաբերական լրիվությունը որոշվում է առանձին ծառուտի ամեն շարահարկի համար աչքաչափով, կամ լրիվաչափի օգնությամբ ծառերի տրամագծերի ընդլայնական

կտրվածքների ընդհանուր մակերեսների գումարով, կամ շրջանաձև հրապարակներում ծառերի հաշվառման ճանապարհով կամ էլ ժապավենային հաշվառումով:

Բնափայտի 1հա պաշարը որոշվում է անտառի գնահատման ժամանակ ծառությունների առանձին շարահարկերի համար տարածաշրջանի համար ընտրված ծավալային այլուսակներով:

Անտառի բնական վերաճի նկարագրության համար նշվել են՝ տեսակային կազմը, կենսունակ նմուշների ընդհանուր քանակի համեմատությամբ, տարիքը (միջին), միջին բարձրությունը, նմուշների քանակը՝ հազար հատ 1հա հաշվով:

Ենթանտառի նկարագրության ժամանակ նշում են թփերի հիմնական տեսակները և նրանց խտության աստիճանը: Խտության աստիճանը որոշելու համար օգտագործում են հետևյալ չափանիշները՝ խիտ-տարածքի 50%-ից ավել ծածկված, միջին խտության 10-49% ծածկված և նոր – 10%-ից պակաս:

Դիրքը նկարագրվում է դիրքադրությամբ, լանջի թեքությամբ, հատվածի տեղադրմամբ ռելիեֆի էլեմենտների նկատմամբ և ծովի մակերևույթի բարձրությամբ:

Վնասված ծառությունների նկարագրության ժամանակ ցույց է տրվում վնասվածքի տեսակը, տարին, վնասված ծառերի տոկոսը և վնասվածության աստիճանը, գիշավոր տեսակին էնտո և ֆիտովնասատուների կամ կենդանիների հասցրած վնասները:

Ճանապարհային հասանելիությունը, որը նշվում է յուրաքանչյուր հատվածի համար: Մատչելի համարվում է հատվածը, եթե նրանով անցնում է ճանապարհը կամ հատվածի սահմանից մինչև ճանապարհը պակաս է 200մ-ից: Գոյություն ունեցող բոլոր ճանապարհները պատկերվում են անտառային քարտեզներում:

Հատվածները հաջորդաբար համարակալվում են արաբական թվանշաններով՝ քառակուտ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

4.3 Անտառութեսության հողերի դասակարգում

Հողատեսքների գույքագրման և գնահատման ժամանակ հիմք է ընդունվել անտառշինության և անտառկառավարման պլանների մշակման հրահանգով սահմանված հետևյալ դասակարգումը՝

1. Անտառային հողեր - անտառապատ, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Անտառային հողերին պատկանում են.

- անտառածածկ հողերը,
- ոչ անտառածածկ հողերը,
- չմիակցված սաղարթով անտառմշակույթները,
- անտառային տնկարանները և պլանտացիաները,

Անտառածածկ տարածքներին վերագրվում են.

- 0,4 և բարձր լրիվությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառությունները,
- մնացած տարիքային խմբերի 0,3 և բարձր լրիվության ծառությունները,
- թփերով պատված հողատեսքները, որոնցում առանց հատուկ անտառմշիրատիվ աշխատանքների հնարավոր չէ հիմնել անտառ:

2. Ոչ անտառածածկ անտառային հողերին պատկանում են.

- հատված տարածքները,
- անտառվերականգնման համատարած հատման հատատեղերը,

- բացատներ – որտեղ բացակայում կամ առկա են առանձին ծառեր,
 - նոսրուտներ – 01-02 լրիվության ծառուտները (բացի երիտասարդ խումբը),
 - հրդեհված - անտառի հատված մինչև աճի դադարեցման աստիճան վնասված,
 - մահացած ծառուտներ - անտառամասեր ֆիտո և էնտո ներգործությունից, արտադրական արտանետումներից, ռեկրեացիոն բեռնվածության և այլ գործոնների ազդեցությունից արմատի վրա չորացած, մահացած ծառուտներ, ինչպես նաև համատրած քամատապալ և ձնետապալ անտառամասերը:
- Գնահատման ժամանակ առանձնացվում են ոչ անտառային հողերի հետևյալ կատեգորիաները:
- Գյուղատնտեսական հողահանդակներ և հատուկ նպատակային նշանակության հողեր, վարելահող, խոտհարքներ, արոտավայրեր, այգիներ, պտղատու տնկարաններ, անտառային ճանապարներ, անտառուղիներ և հակահրդեհային ճեղքեր, էլեկտրահաղորդակցության, հեռախոսակապի գծեր, բնակատեղեր, ավազահանքեր, մելորատիվ առուներ և այլն:
 - Հողեր, որոնք առանց հատուկ մելորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառաճեցման համար:
 - Ժայռեր, քարացրոններ, ճահճուտներ, ոչ անտառածածկ թեք լանջեր և այլն:

Աղյուսակ 5 Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը

Հողատեսքեր	Մակերեսը, հա
Ստուգման ժամանակաշրջանի անտառմշակություններ	0,1
Բնական ծառուտներ	0,3
Ոչ անտառածածկ տարածքներ	0,3
Անտառսերմնային բազաներ	0,1
Բնության և մշակութային ժառանգության արժեքավոր օբյեկտներ	0,1
Վարելահողեր, այգիներ, ավազուտներ	0,1
Խոտհարք, արոտավայր	0,3

5. Անտառային հողերի բնութագիրը

5.1 Անտառունտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 17,7%-ը (4385,9հա), որից անտառածածկը՝ 1740,4հա է, նույն թվում անտառմշակությունները՝ 706,8հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 206,84հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 1648,2հա, նոսրուտները՝ 367,8հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 422,7հա (ընդհանուր ոչ անտառային հողերի 20,6%-ը):

Հատուկ նշանակության հողատեսքերը բացարձակ գերակշռում են և զբաղեցնում են 18859,5հա (76,3%), որից անտառածածկ մակերեսը՝ 13505,80հա, նույն թվում անտառմշակությունները՝ 909,4հա, չմիակցված աղարթով անտառմշակությունները՝ 20,5հա:

Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են 85,5հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 1666,80հա, նոսրուտները՝ 1928,7հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1633,5հա (79,4%-ը):

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են ընդամենը 1485,6հա (6,0%), ամբողջությամբ անտառային հողերում և անտառածածկ:

Անտառունտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 16731,8հա է, որից ընդհանուր 4641,8 հեկտարն է միակցված սաղարթով անտառմշակույթ (27,7%), հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 292,3հա, անտառային բացատները և պարապուտները՝ 3315հա, նոսրուտները՝ 2296,5հա:

Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 2056,2հա:

Անտառունտեսության և անտառպետությունների ընդհանուր մակերեսների բաշխվածությունն ըստ անտառպաշտպանական կատեգորիաների և հողատեսքերի տրված է այսուակ 6-ում, պատկերված՝ քարտեզ 5-ում, իսկ անտառի կատեգորիաներն ըստ անտառպետությունների նշված է այսուակ 7-ում:

Այլուսակ 6. Հրազդանի անտառունտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերեսը, հա
1	Ընդհանուր մակերեսը	Արտադրական	1485,6
		Պաշտպանական	4385,9
		Հատուկ նշանակության	18859,5
		Ընդամենը	24731
2	Անտառածածկ մակերեսը	Արտադրական	1485,6
		Պաշտպանական	1740,4
		Հատուկ նշանակության	13505,8
		Ընդամենը	16731,8
2.1	Այդ թվում անտառմշակույթներ	Արտադրական	25,6
		Պաշտպանական	706,8
		Հատուկ նշանակության	909,4
		Ընդամենը	1641,8
3	Չմիակցված անտառմշակույթներ	Հատուկ նշանակության	20,5
4	Անտառային տնկարան	Հատուկ նշանակության	18,7
5	Ոչ անտառածածկ	Պաշտպանական	2222,8
		Հատուկ նշանակության	3681,0
		Ընդամենը	5903,8
5.1	Հրդեհված, մահացած, հատված և չվերականգնված	Պաշտպանական	206,8
		Հատուկ նշանակության	85,5
		Ընդամենը	292,3
5.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	Պաշտպանական	1648,2
		Հատուկ նշանակության	1666,8
		Ընդամենը	3315
5.3	Նոսրուտներ	Պաշտպանական	367,8
		Հատուկ նշանակության	1928,7
		Ընդամենը	2296,5

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերեսը, հա
6	Ոչ անտառային հողեր	Պաշտպանական	422,7
		Հատուկ նշանակության	1633,5
		Ընդամենը	2056,2

**Այլուսակ 7 Անտառապետությունների բաշխվածությունը ըստ հիմնական
նպատակային նշանակության և անտառապետությունների**

№	Անտառապետություն	Նպատակային նշանակությունը / մակերեսը, հա					Ընդամենը		
		Արտադրական	Պաշտպանական	Հատուկ	Անտառապետություն	Անտառածածկ մակերեսը			
		Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը	Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը	Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը	Անտառածածկ մակերեսը	
1	Մեղրաձոր			552,5	431,4	6682,5	5092,7	7235	5524. 1
2	Ծաղկաձոր	396,6	396,6	514,4	296,6	3105	2484,5	4016	3177,7
3	Արգական					8201	5814,5	8201	5814,5
4	Բուժական	1089	1089	879	427,5			1968	1516,5
5	Արզնի			2440	584,9			2440	584,9
6	Երևան					403	75,6	403	75,6
7	Էրենունի					468	38,5	468	38,5
	Ընդամենը	1485,6	1485,6	4385,9	1740,4	18859,5	13505,8	24731	16731,8

5.2 Անտառային հողերի և փոփոխությունն ըստ հողատեսքերի

Անտառապետության ընդհանուր մակերեսի 1990-ի համեմատությամբ 2022թ. ավելացումը 5366,0 հեկտարով, իսկ անտառածածկի մակերեսը 4061,8 հեկտարով բացատրվում է նախկին Երևանի անտառապետության միացման, անտառապետության շրջակա համայնքների հետ սահմանների և անտառշինական ու համայնքների կադաստրային բարտեզագրական նյութերում առկա անհամապատասխանությունների ճշտման, ինչպես նաև Երկրատեղեկատվական համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով (այլուսակ 8): 2022թ դրությամբ հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառապետությունների ներկայացված է այլուսակ 9-ում:

Այլուսակ 8. Անտառապետության անտառային հողերի հողատեսքերի

փոփոխությունը

№	Հողատեսքը	1990		2022		Տարբերությունը
		Հա	%	Հա	%	
1.	Ընդհանուր	19365		24731,0		+5366,0
2.	Անտառային հողեր, ընդամենը	15123		22604,8		+7481,8
2.1.	Անտառածածկ, ընդամենը	12670		16731,8		+4061,8
2.1.1.	Այդ թվում անտառմշակույթներ	1328		1641,8		+313,8
2.2.	Զմիակցված սաղարթով անտառմշակույթներ	726		20,5		-705,5
2.3.	Անտառային տնկարան, պլանտացիաներ	41		18,7		-22,3
2.4.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	1686		5833,8		+4147,8
2.4.1	Նոսրուտներ	1426		2226,5		+800,5

2.4.2	Հրդեհված, հատված և չվերականգնված տարածքներ	17		292,3			+275,3
2.4.3	Բացատներ և պարապուտ տարածքներ	243		3315			+3072,0
3.	Ոչ անտառային հողեր	4242		2056,2			-2185,8

Այլուսակ 9. Հրազդանի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառապետությունների

№	Հողատեսքը	Անոռապետություններ							Ընդամենը
		Մերուժոր	Ծառկածոր	Արգական	Բուժական	Արգի	Երևան	Էրեբունի	
1.	Ընդհանուր	7235	4016	8201	1968	2440	403	468	24731
2.	Անտառային հողեր, ընդամենը	6843,9	3881,8	7413,3	1965,1	2050,6	218,1	302	22674,8
2.1.	Անտառածածկ, ընդամենը	5522,8	3176,5	5808,3	1488,4	584,9	75,6	38,5	16695
2.1.1.	Այդ թվում անտառմշակույթներ	438,7	233,3	304,6	6,2	559,1	58,9	38,5	1639,3
2.2.	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ		12,3	7			0,5	0,7	20,5
2.3.	Անտառային տնկարան		18,7						18,7
2.4.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	1321,1	674,3	1598	476,7	1465,7	142	262,8	5940,6
2.4.1	Նոսրուտներ	763,8	315	890,3	106,8	234,9	14,1	8,4	2333,3
2.4.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	554,6	359,3	707,6	369,9	1024	96,1	203,5	3315
2.4.3	Հրդեհված, մահացած տնկարան	2,7		0,1		206,8	31,8	50,9	292,3
3.	Ոչ անտառային հողեր	391,1	134,2	787,7	2,9	389,4	184,9	166,0	2056,2

Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառէջ կաղնին՝ բարձրաբուն և ցածրաբուն միասին՝ 12602,1հա, 911762խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 75,5%-ը և ընդհանուր պաշարի 74,7%-ը, ընդորում 1990թ. համեմատությամբ մակերեսը ավելացելլ է 3087,1 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 97562խտմ³-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 989,6հա, ընդհանուր պաշարը 69107խտմ³ (անտառածածկի 5,9%-ը և պաշարի 5,7%-ը), 1990թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 647,6հեկտարով, ընդհանուր պաշարը՝ 32207խտմ³-ով, ստուտները՝ 724,6հա, 83815խտմ³ (անտառածածկ տարածքի 4,3%-ը և պաշարի 6,7%-ը), գիհուտները՝ 288,9հա, 6189խտմ³

պաշարով (1,7% և 0,5%) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 12,6%-ը և ընդհանուր պաշարի 12,4%-ը (այսուակ 10):

Այսուակ 10. Անտառածածկի մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	1990		2022	
		մակերեսը, հա	Պաշարը խտմ ³	մակերեսը, հա	Պաշարը խտմ ³
1	Սոճի	1134	28900	724,6	83815
2	Կաղնի բարձրաբուն	44	1800	3559,9	378073
3	Կաղնի ցածրաբուն	9471	812400	9042,2	533689
4	Բոխի	342	36900	989,6	69107
5	Հացենի	136	5600	124,8	2569
6	Թժկի	8	300	25,9	1438
7	Թեղի	141	15400	111,3	5476
8	Ակացիա սպիտակ	30	600	30,2	1806
9	Կեչի	599	47400	651,2	46699
10	Կաղամախի	24	900	68	9957
11	Լորենի	637	106700	323,8	60706
12	Բարդի	4	100	91	12231
13	Ուղի ծառանման	1	100	36,4	1800
14	Տանձենի	4	100	15,6	651
15	Խնձորենի	23	200	52,6	796
16	Գիհի	60	600	288,9	6189
17	Դրախտածառ			52,7	691
18	Ընկուզենի			1	73
19	Ծիրանենի			2,7	29
20	Բալենի			9,4	299
21	Սալորենի			0,1	4
22	Սոսի			0,3	12
23	Գլեղիչա			0,1	4
24	Փռշնի			4,4	71
25	Նշենի			440,4	2801
26	Արոսենի			36,3	806
27	Փշատենի			0,5	24
28	Սպիրեյա	34	800		
29	Ցիցերիս			0,4	8
30	Ալյանթ			2,1	139
31	Սզնենի			3,5	34
32	Շուշա			0,4	6
33	Դեղին ակացիա	5	100	4,7	73
Ընդամենը		12697	1058900	16695	1220076

Անտառածածկատեսության անտառածածկի 24,2%-ը ցածր լրիվության (0,3-0,4) ծառություններ են՝ 4036,3հա, ընդհանուր պաշարը՝ 190415խտմ³, միջին լրիվության ծառությունների ընդհանուր մակերեսը՝ 6511,3հա (39,0%), ընդհանուր պաշարը՝ 474019խտմ³, իսկ բացաարձակ գերակշռող բարձր լրիվության ծառությունները՝ 6147,1հա (36,8%), ընդհանուր պաշարը՝ 5556420խտմ³ (81,4%):

Ծառուտների միջին լրիվությունը 0,58 է, ինչը բացատրվում է, որ անտառմշակույթների հիմնումից մինչ այժմ սահմանված կարգով խնամքի հատումների հաջորդական փուլերը չեն իրականացվել: Ամենաբարձրը Բուժականի անտառպետությունում՝ 0,65, իսկ ամենացածրը Էրեբունու անտառպետությունում՝ 0,42 (Այուսակ 11):

Այուսակ 31. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության և պաշարի

Գերակշռող ծառատեսակը	Լրիվությունը									Ընդ.	Միջին
	0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1			
Սոճի	52,3	143,8	176,6	252,5	82,4	13,4	1,7	1,9	724,6	0,53	
	3561	12189	17947	34323	12661	2537	289	308	83815		
Կաղնի	432,1	481,1	522,2	1068,5	889,1	129,2	23,6	14,1	3559,9	0,56	
	32940	43859	46002	118242	115647	18873	1368	1142	378073		
Կաղնի ցածրաբուն	842,5	1261,9	1456,8	1774,5	2111,7	1422,8	172		9042,2	0,59	
	22886	50426	75823	108472	153904	107223	14955		533689		
Բուսի	4,9	13,3	3,6	20,4	66,5	8,3	0,6		117,6	0,63	
	466	1312	387	2587	7918	959	44		13673		
Բուսի ցածրաբուն	3,8	7	134,2	68,8	229,2	333,4	95,6		872	0,72	
	155	211	5630	4384	14193	23657	7204		55434		
Հացենի	24,1	37,7	36,5	17,9	1,4	7,2			124,8	0,47	
	124	463	877	728	36	341			2569		
Թիւկի	3,7	10,7	4,5	6,8			0,2		25,9	0,46	
	11	959	95	362			11		1438		
Թեղի	13,9	24,8	29,8	41,1	1,3	0,4			111,3	0,49	
	297	757	1509	2742	139	32			5476		
Ակացիա սպիտակ	3,4	5,2	5,1	5,5	11				30,2	0,55	
	165	216	332	266	827				1806		
Կեչի	19,3	81,3	157,9	228,2	110,9	53,6			651,2	0,58	
	348	3457	10083	15870	11207	5734			46699		
Կաղամախի		1	4,2	33,2	8,2	21,4			68	0,67	
		77	461	4449	1562	3408			9957		
Լորենի	13,3	22,8	3,7	72,3	162,8	48,9			323,8	0,65	
	1397	4228	491	12154	32829	9607			60706		
Բարդի	20,7	10,7	10,8	13,5	20,2	15,1			91,0	0,51	
	2457	1421	1456	1732	2890	2275			12231		
Ուռենի ծառ	6,4	14,5	1,8	8,5	2,6	2,6			36,4	0,48	
	292	480	185	536	115	192			1800		
Ծիրանենի	1,1	0,2	1,4						2,7	0,41	
	7	2	20						29		
Գլեղիչիա			0,1						0,1	0,5	
			4						4		
Տանձենի	0,9		5,8	6,6	2,3				15,6	0,56	
	8		186	281	176				651		
Փոշնի	0,4	2,1	1,9						4,4	0,43	
	4	31	36						71		
Նշենի	120,9	102,5	62	103,8	51,2				440,4	0,47	
	444	504	400	870	583				2801		
	0,2	0,8							1	0,38	

Գերակշռող ծառատեսակը	Լրիվությունը									
	0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1	Ընդ.	Միջին
Հոնական ընկույզենի	4	69							73	
Արռսենի	11,5	2,3	22,5						36,3	0,43
	161	55	590						806	
Խնձորենի	9	15,4	18,6	6	3,6				52,6	0,46
Հետազոտված բնակավայրերի մեծ մասում գործում են մանկապարտեզներ և նախակրթարաններ: Հետազոտված բնակավայրերում գործում են տարրական, հիմնական, ավագ կամ միջնակարգ դպրոցներ: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում վատ է: Վերանորոգման կարիք ունեն բազմաթիվ դպրոցներ, կահույքի, սպորտային և ուսուցողական նյութերի, որակավորված ուսուցիչների պակասն այլևս օրիհասական խնդիրներ են: Կրթության որակը անհապաղ բարելավման կարիք ունի: Ներկայումս բազմաթիվ դպրոցներում մեկ ուսուցչի կողմից դասավանդվում են մի քանի առարկաներ: Սպորտային ակումբներ և ենթակառուցվածքներ հետազոտված գյուղական գրեփե բնակավայրերում չկան՝ բացառությամբ դպրոցների մի մասի սպորտային դահլիճների: Համեմատաբար մեղմ է պատկերը քաղաքային բնակավայրերում:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում շատ վատ չէ. բնակավայրերում առկա են բուժկետեր և ամբողատորիաներ, որտեղ վերապատրաստված բուժաշխատողները առաջին օգնության ծառայություններ են մատուցում բնակչությանը: Բարձրակարգ ու կիխիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն մոտակա քաղաքներում:

Գյուղական բնակավայրերի մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի: Մշակույթի և կամ կենցաղի տների շենքային պայմանները գրեթե ամենուր վատ վիճակում են, մշակութային իրադարձությունները եզակի են: Համեմատաբար այլ է վիճակը տուրիստական կենտրոններում, որտեղ մյուս բնակավայրերի համեմատ դիտվում է մշակութային աշխուժություն:

Համայնքներնի մեծամասնությունը հարուստ են բնական և պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով, խաչքարերով: Այդ ամենի առկայությունը զբոսաշրջության զարգացման կարևոր նախապայման է հանդիսանում, և, մյուս պայմանների բարեկարգման շնորհիվ, զբոսաշրջության կոորդինացվածությունը կարելի է թուլացնել՝ ընդլայնելով տուրիստական և էկոտուրիստական երթուղիները: Մարզում ունենալով նման փորձ՝ ջանքեր պետք է ներդրվեն զբոսաշրջության կայուն ծառայություններ մշակելու և ներկայացնելու համար, և այդ ծառայությունները պետք է լայնորեն ներկայացվեն ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա շուկաներում:

8.5 Տրանսպորտային ծառայություններ

Անտառունտեսության հարակից բնակավայրերում գործում են կանոնավոր տրանսպորտային ծառայություններ դեպի համայնքային կենտրոններ, մարզկենտրոն և հարևան բնակավայրեր: Մարզկենտրոնից և մայրաքաղաքից դեպի անտառունտեսությանը հարակից բնակավայրեր տանող ճանապարհների որակն ընդհանուր առմամբ կամ լավն է, ինչը չի կարելի ասել ներհամայնքային ճանապարհների մասին: Ճանապարհներն անցանելի են գրեթե ամբողջ տարվա ընթացքում:

Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների և Ենթակառուցվածքների գարգացումն անհրաժեշտ է, նախ և առաջ, համայնքների կայուն զարգացման նպատակով: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում Ենթակառուցվածքների գարգացումը ուսումնասիրվող տարածքներում զբոսաշրջության զարգացման կարևորագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման զարգացման նախադրյալները լավը չեն. համայնքային և միջիամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չեն, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային և ազգային զբոսաշրջության Ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան և այլն:

8.6 Այլ Ենթակառուցվածքներ

Հետազոտված բոլոր բնակավայրերն ամբողջությամբ էլեկտրիֆիկացված են: Էլեկտրաէներգիայի մատակարարումները կայուն են, խափանումները սակավաթիվ են և անհապաղ վերացվում են: Անջատումների ընդհանուր տևողությունը տարվա մեջ չի գերազանցում մի քանի տասնյակ ժամը: Հետազոտված բոլոր բնակավայրերը այս կամ այն չափով ապահովված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ. որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Ջրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերից գազաֆիկացված չեն միայն 3-ը: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում առկա է կանոնավոր, թեև ոչ բավարար հաճախ իրականացվող աղբահեռացում: Միաժամանակ, ծայրահեղ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը:

8.7 Աշխատուժ, զբաղվածություն և եկամուտներ

Ընդհանուր առմամբ 18 տարեկանից բարձր աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է ընդհանուր առկա բնակչության մոտ 68%-ը: Աշխատունակ տարիքի բնակչության մոտ 74%-ը աշխատունակ է, որոնց 88%-ը՝ զբաղված է (ներառյալ ինքնազբաղվածները), որից 45%-ը՝ պետական հիմնարկներում՝ դպրոցներում, մանկապարտեզներում, համայնքապետարաններում և այլն: Մասնավոր հիմնարկներում զբաղվածները հիմնականում աշխատում են գյուղմթերքի վերամշակման, ձկնաբուծական, թռչնաբուծական ու անասնաբուծական, հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկություններում, ինչպես նաև առևտուի և սպասարկման ոլորտի տարբեր կառուցներում: Աշխատունակ բնակչության մոտ 12%-ը զբաղված չեն տնտեսական որևէ գործունեությունմբ բարձր տարիքի կամ առողջական պատճառներով: Այնուամենայնիվ, աշխատունակ տարիքի բնակչության գրեթե 64%-ը կամ աշխատում են, կամ էլ ներգրավված են ինքնապահովման գյուղատնտեսական գործունեության մեջ: Սա կարևոր է, քանի որ այն վկայում է, որ հետազոտված բնակավայրերում զգալի աշխատանքային (մարդկային) ռեսուրսներ կան, որոնք կարող են ներգրավվել անտառտնտեսական տարբեր գործողություններում:

8.8 Գյուղատնտեսություն

Անտառտնտեսության հարակից համայքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բնակավայրերի մեծամասնությունում բանջար-բռստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և հիմնականում աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում:

Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմանավորված է արոտավայրերի առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք ընդհանուր են ՀՀ գրեթե բոլոր գյուղական համայնքների համար: Դրանց շարքում կարելի է նշել կենդանական ծագման արտադրանքի ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների բացակայության կամ դրանց վատ վիճակի հետ: Ենթակառուցվածքների մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարաքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

8.9. Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում

Անտառտնտեսությանը հարակից 43 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով քաղաքային ընդհանուր 7 բնակավայրերում բնակչության թիվը մոտ 174000, 50 գյուղական բնակավայրերում 105000: Բնակավայրերից միայն 3-ը գազաֆիկացված չեն: Ձեռուցման փայտի նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով կազմում է մոտ 200000մ³: Նախատեսվող խնամքի հատումներից հնարավոր է բավարարել տարեկան 1900խտմ³, անտառներում ցցաչոր և քմատապալ ու ձնակոտոր ծառերի ընդհանուր պաշարը գնահատվել է մոտ 500խտմ³, իսկ անտառում վերջին տարիներն առաջացած և չարտահանված թափուկը գնահատվել է մոտ. 1500մ³, ընդ որում հիմնականոմ մանր բնափայտի տեսքով:

9. Անտառվերականգնման միջոցառումներ

Հրազդանի անտառութեսության ներկայիս սահմաններում անտառմշակույթների հիմնման աշխատանքներ իրականացվել են դեռևս նախորդ դարի 50-ական թվականներից:

1990թ. գոյքագրմամբ անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմել է 2103հա, նոյն թվում միակցված սաղարթով անտառմշակույթները՝ 1328հա, չմիակցված սաղարթով՝ 726հա, բացի նշվածից 49հեկտար սաղարթի տակ հիմնված:

1990թ. գոյքագրմամբ միակցված սաղարթով անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմել է 2054հա, նոյն թվում՝ 1328 հեկտարը միակցված սաղարթով, չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ 726 հեկտար: Անտառմշակույթների վիճակը գնահատվել է լավ՝ 247,7հա (7,2%), բավարար՝ 1715հա (88,4) և անբավարար՝ 91,3հա (4,4%):

2022թ. գոյքագրմամբ անտառմշակույթների ճշտված մակերեսը կազմել է 1662,3հա, չմիակցված սաղարթով անտառմշակույթները, ընդամենը 20,5 հա:

Անտառմշակույթների վիճակը գնահատվել է լավ՝ 274,3հա (16,5%), բավարար՝ 771,8հա (46,4%) և անբավարար՝ 616,2 հա (37,1%):

Անտառմշակութների վիճակը պատկերող նշված ցուցանիշները հիմնականում կապված են կիմայական ընդգծված փոփոխությունների և հիվանդություններով ու վնասատուներով վնասվածության հետ, ինչը առավել ընդգծված է սոճու անտառմշակույթներում:

Անտառութեսությունում մինչև 25° թեքության հատված, հրդեհված, չվերականգնված տարածքները և անտառային բացատներն ու պարապուտ տարածքները զբաղեցնում են 3289հա, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները: 30° -ից բարձր թեքությունների վրա նշված տարածքները և թողնվել են բնական վերականգնման տակ (Այլուսակ 23):

Այլուսակ 53. Ոչ անտառածածկ մակերեսների տեղաբաշխումն ըստ լանջի թեքության աստիճանի և միջին բռնիտետային դասի

Լանջի թեքությունը	Միջին բռնիտետը	Հրդեհված, մահացած տնկարք	Նոսրուտներ	Բացատներ և պարապուտներ	Ընդամենը
Մինչև 5°	4,7	27,2	28,1	201,5	256,8
$6\text{-}10^{\circ}$	5,3	27,2	122,8	317,3	467,3
$11\text{-}15^{\circ}$	5,3	58,7	125,9	490,5	675,1
$16\text{-}20^{\circ}$	5,1	12,4	248,2	606,4	867,0
$21\text{-}25^{\circ}$	5,3	28,3	469,5	525,0	1022,8
$26\text{-}30^{\circ}$	5,3	63,4	493,5	576,9	1133,8
$31\text{-}35^{\circ}$	5,5	75,1	733,5	571,5	1380,1
$36^{\circ}\text{-ից բարձր}$	5,5		75,0	25,9	100,9
Ամբողջը	5,3	292,3	2296,5	3315,0	5903,8

2023-32 թվականների համար նախատեսվում են անտառիմնման միջոցառումներ բացատներում, պարապուտ տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում՝ ընդհանուր 764,3 հեկտարի վրա, իսկ ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է վերականգնման միջոցառումներ ընդամենը 505 հեկտարի վրա, իարթաների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 30000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 7000 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

Տնկարանային տնտեսության, այդ թվում ջերմատներում փակ արմատային եղանակով աճեցվող տնկինների ոռոգումն իրականացվում է Բջնի գետի ջրերով։ Հրազդան գետի Բջնի վտակը հոսում է անմիջապես տնկարանային տնտեսության տարածքով, որից ինքնահոս եղանակով, 230մմ տրամագծով ցինկապատ խողովակների միջոցով իրականացվում է ջրառ։ Զուրը կուտակվում է 460մ³ ավազանում, որից էլ կատարվում է անհրաժեշտ բաշխում։

9.1. Անտառաճեցման պիտանելիության դասակարգում

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր անտառային տիպերում և հողային կատեգորիաներում բնական վերաճի ընթացքը և անտառաճման պայմանները։ Անտառիմնման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունում հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը՝

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը, հողերը հզոր կամ միջին հզորության են, մայրական ապարների ելքը մինչև 20%։ Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագած, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ։
- Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով, այն է միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների ելքը 20-40%, միջին հզորության, մինչև 35° թեքության լանջերի վրա գտնվող տարածքները։ Նշված պայմաններում բարձրարժեք տեսակները աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են I-ին խմբին։
- Երրորդ խմբի մեջ մտնող հողային պայմաններում անտառաճեցման հնարավորությունները սահմանափակ են, որտեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջեն չեն հողակիմայական պայմանների նկատմամբ։

- Զորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար, այսինքն շատ ուժեղ քարքարոտ են, իսկ մայր ապարի ելքը կազմում է 60% և ավելի:

9.2. Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ

Կախված անտառիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ցանքի եղանակով հիմնված տնկարկը սովորաբար ավելի երկարակյաց և կենսաբանորեն ավելի կայուն է, սակայն առաջին տարիներին մեծ է կախվածությունը բնական պայմաններից և սերմերի ծլունակությունից, բուսակները ենթակա են ոչնչացման կլիմայական պայմանների տատանումների հետևանքով, ինչպես նաև մոլախոտերի հետ միաժամանակ աճման պայմաններում ցածր է մրցակցությունը: Տնկման առավելությունը կայանում է նրանում, որ տնկիները առաջին տարիներին ավելի արագ են աճում, քանի որ իրենց դանդաղ աճման շրջանը անցել են տնկարանում, ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառաճման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջը:

Անտառիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային եղանակով՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը, իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը, կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից, նախատեսվում է 1500-4000 գմ/հա:

Անտառվերականգնում նախատեսվում է ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման նպատակներով և իրականացվում են մայր սաղարթի տակ ցանքսի կամ տնկման եղանակներով: Որոշ հատվածներում, որտեղ բնական պատուհանները համեմատաբար մեծ են և ընդգրկում են մակերեսի ոչ պակաս 40%-ը, անտառաճեցման նպաստավոր պայմանների առկայության դեպքում, նախատեսվում է տնկման եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերաճի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

9.3. Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները

ա) Կաղնի խոշորառէց

• Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, կեչի, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդութորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ): Հողի նախապատրաստումը հատկապես 15° –ից բարձր թեքությունների վրա խրամատներով (0.5×0.35 մետր), երկարությունը սովորաբար վերցվում է 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում, կախված մայր ապարների ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-4000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:

• Կաղնու բուսակներով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդութորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ) փոսերով մինչև 15° թեքությունների վրա, միջարքայինը 2,5 կամ 3մ, միջբույսայինը՝ 1մ սխեմայով:

բ) Սոճու անտառմշակույթների հիմնում, առաջարկվում է հիմնել սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան սերմնաբուսակներով, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովվում է բարձր կազմողականակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշխման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևսավոր ծառատեսակների տնկիներով:

գ) Փոսերով հողի նախապատրաստումը ($0.5 \times 0.5 \times 0.5$ մետր) նախատեսվում է լանջերի մինչև 15° թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3×3 սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու կամ անտառային կեռասենու համար:

• Անտառային տանձենին և խնձորենին փոսային եղանակով 3×3 մ սխեմայով:

դ) Անտառվերականգնումը նախատեսվում է նաև ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: 0,3-0,4 լրիվության անտառներում մայր սաղարթի տակ համեմատաբար բարձր թեքությունների վրա խրամատներով, սերմերի ցանքսով, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ մինչև 25° թեքության լանջերում, հանքայնացման եղանակով, որի դեպքում պատրաստում են հարթակներ (1×1 մետր), վերցվում է խաշամը, կատարվում է փիսրեցում և հարթակների 4 անկյուններում ցանվում սերմերը:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերաճի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյուններով նախատեսվող հարթակների թիվը կազմում է 500-1000 հատ, որը ապահովում է

համապատասխանաբար 2000-4000 ցանքատեղ, ընդ որում անմիջական մայր սաղարթի տակ սերմերի ցանքս չի կատարվում, այլ կատարվում է սերմերի տարածման գոտուց դրւու:

Ցանկապատի պատրաստում նախատեսվում է ինչպես անտառմշակույթների հիմնում նախատեսած տարածքներում, այնպես էլ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ նշանակած տարածքներում՝ անասունների մուտքը կանխելու նպատակով և նախատեսվում է մետաղյա փշալարով, իսկ սյունները փայտից, որոնց հիմքային մասը մշակվում է ձութով:

Ազրոտեխնիկական միջոցառումներից կարևորվում են անտառմշակույթիների խնամքի աշխատանքները:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթիները բավարար կայողականություն, աճ և արտադրողականություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղիան փխրեցում 5 անգամ, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ – 3, 4-րդ – 2 և 5-րդ տարում – 1 անգամ:

Տնկարանում ցանքսի համար, անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման նպաստման անհրաժեշտ սերմերի պահանջը բավարարելու նպատակով տեղադրվել է անտառսերմնային մշտական փորձահրապարակներ ընդհանուր հաշվով 421,7հա, նոյն թվում Արգականի անտառապետությունում՝ 186,2 հա, Մեղրաձորի անտառապետությունում՝ 199,6հա, Շաղկաձորի անտառապետությունում՝ 35,9հա: Անտառսերմնային տեղամասերի ընդհանուր մակերեսի 54,6%-ը (230,1հա) կաղնու տեղամասերն են, սոճին զբաղեցնում է 80,2 հա(19%), կեչին՝ 48,9հա(11,6%), լորենին՝ 57,5հա(13,6%): Որոշ տեսակների սերմերը հնարավոր է հավաքել ծառուտի կազմում նրանց ներկայացվածությունից:

Այլուսակ 64. Տեղեկագիր անտառսերմնային մշտական տեղամասերի

№	Անունաւության վերաբերյալ	Գլխակիր ծառաբանություն	Քառորդական ժամանակաշրջան	Ն Քառորդական ժամանակաշրջան	Մակերեսը, հեկտար	Ծառահամար	Ջրածություն	Լանջի թերությունը	Վայ	Անդամականություն	Լրիվացնելու	Նորմանություն
1	Կառավարման պետական ստորագրություն	Կաղնի	4	6	7,5	4կ2թ1թ1կչ	Հս- 30	2025	4	1	75	
			9	13	6,5	5կ3լ1թ1կչ	Հս-ալ 30	1970	4	1	70	
			13	44	8,4	6կ3լ1թ1+հց+կչ	Հս-25	2000	4	1	70	
			19	58	4,9	7կ2թ1հց+կչ	Հս-ալ 25	2100	4	1	80	
		Ընդամենը		27,3								
		Սոճի	3	63	1,6	10ս+թիս	Հվ-ալ 30	2050	3	1	45	
			4	2	4,9	10ս+կ+թիս	Հս-20	1950	1	1	45	
			13	21	0,5	10ս	Հս-ամ 25	1835	3	1	55	
			15	10	10,3	10ս	Հվ-ալ 25	2020	3	1	60	
			15	18	9,5	10ս	Հվ-25	1985	3	1	60	

№	Արդարականացնելու մասին օրենք	Արդարականացնելու մասին օրենք	Քառորդականացնելու մասին օրենք	Համապատասխան պահանջման մասին օրենք	Այժմական պահանջման մասին օրենք	Անդամականացնելու մասին օրենք	ՎՐԱ	Առաջարկվող կողման	Առաջարկվող կողման			
2	Ճանաչումը և անտառապետությունում	Կեչի	15	46	0,7	10ս	Հս-ամ 20	1960	3	1	60	
			16	20	22,4	7ս3կ	Հս-ամ 30	2020	3	1	60	
			17	9	14,2	10ս	Արլ-30	2100	3	1	55	
			17	18	1,5	10+կ	Հս-ալ 25	2190	3	0	55	
			Ընդամենը		65,6							
			12	89	5,5	7կ3կ	Հս-ամ 25	2165	4	1	60	
			5	5	28,4	5կ2կ2թխ1ար	Հս-30	2025	4	1	50	
			7	11	15,0	6կ2կ1թխ1ար	Ա-30	2290	4	1	70	
			Ընդամենը		48,9							
			Լորենի	13	2	2,9	6լ3կ1թխ+հց	Հս-30	1780	3	1	70
				13	31	3,4	6լ3կ1թ+հց	Հս-ամ 30	2170	3	1	70
				14	2	6,7	9լ1կ+հց	Հս-30	1880	4	1	90
				14	9	2	7լ2կ1թխ+հց	Հս-ալ 25	1940	3	0	75
				14	11	17,6	5լ3կ1հց1թխ	Հս-ալ 30	1930	3	1	85
				14	13	4,5	8լ2կ+հց+թխ	Հս-30	1935	4	1	85
				14	14	8,2	8լ2կ+հց+թխ	Հս-ալ 30	1980	4	1	90
				14	22	2,3	7լ2կ1թխ+հց	Հս-ալ 30	1800	3	1	70
				9	59	9,9	6լ2կ1թխ1հց	Հս-ալ 30	2220	3	1	70
			Ընդամենը		57,5							
	Ընդամենը անտառապետությունում		199,3									
	Սոճի	Կաղնի	2	9	3,3	6կ2թ1հց1թխ	Հս-ամ 25	1850	4	1	90	
			2	58	1,8	7կ2հց1թխ+թղ	Հս-ալ 20	2150	4	1	90	
			2	67	1,5	9կ1թխ+կչ	Հս-ալ 30	2000	4	1	80	
			4	60	2,3	10կ+կչ+թ+ար	Հս-ալ 20	2060	4	1	70	
			5	9	5,4	10կ+կչ+թ	Հս-30	1950	4	1	80	
			13	26	1,7	5կ3թ2հց+թխ+տձ	Հվ-ալ 25	1950	4	1	110	
			13	32	3,1	6կ1թխ1հց1թ1ուռ	Հվ-ալ 20	2060	4	1	110	
		Ընդամենը		19,1								
		Տեղի	12	6	1,1	10ս	Հվ-ամ 20	1940	1	1	50	
			12	43	1,3	10ս	Հվ-ամ 15	1850	4	1	70	
			14	7	1,0	10ս	Հվ-ալ 25	1890	3	1	60	
			20	51	1,5	10ս	Ա-25	1715	4	1	60	
			21	4	2,1	5ս4խձ1թխ	Հվ-ամ 5	1830	2	1	50	
			21	12	5,1	10ս+խձ+տձ	Հս-ամ 5	1805	1	1	50	
	Ընդամենը		12,1									
	Տանձ, Խնձոր	20	52	0,4	10խձ+տձ	Արլ+25	1690	4	1	50		
		21	6	0,9	10խձ+հց+տձ	Հս-ամ 5	1835	4	1	35		
		22	6	0,7	6տձ4խձ	Հս-ամ 5	1790	4	1	30		
		22	23	0,7	6տձ4խձ	Հս-ամ 5	1795	4	1	35		
	Ընդամենը		2,7									
	Թեղի	23	3	0,9	6թղ2հց2թխ	Հվ-ամ 5	1885	3	1	40		
		23	44	1,1	4թղ3հց1թխ1տձ1խձ	Հվ-5	1810	3	1	45		
	Ընդամենը		2,0									
	Ընդամենը անտառապետությունում		35,9									

10. Պահպանություն անտառային հրդեհներից

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամուային և խոտային ծածկութը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թռիչքածն:

Ելնելով եղանակային պայմաններից տարրերակվում են.

• Արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 200-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր:

• Ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է:

• Թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է:

• Ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասը և տվյալները մշակել են համակարգչային ծրագրով, նույնիսկ ըստ հատվածների:

Անտառտնտեսության 10,9%-ը հրդեհավտանգության 1-ին դասի տարածքներ են, 31,7%-ը 2-րդ դասի, 43,65%-ը 3-րդ, 4-րդ և 5-րդ դսերի տարածքները միասին՝ 13,75%:

Այուածակ 75. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի

Անտառապետություն	Հրդեհավտանգության դասը, հա					Ընդամենը	Միջին դասը
	1	2	3	4	5		
Մեղրաձոր	773	1896	4340	170	56	7235	2.6
Ծաղկաձոր	742	1187	1934	69	84	4016	2.7
Արգական	782	3508	3065	272	574	8201	2.6
Բուժական	202	518	763	40	445	1968	3.2
Արզնի	133	508	635	265	899	2440	3.7
Երևան	43	167	30	73	91	403	3.3
Էրենունի	20	56	27	142	224	468	4.1
Ընդամենը	2695	7840	10794	1031	2373	24731	2.8
% %	10,90	31,70	43,65	4,17	9,58	100	

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվում են նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրամբարտակների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում,

հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն։ Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողոթյունները։

Աղյուսակ 86 Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների

№	Միջոցառումներ	Չափի միավորը	Նախատեսվում է
1.	Նախազգուշական միջոցառումներ		
1.1.	Խորհրդակցություններ համայնքներում	հանդիպում	20
1.2.	Մշտական ցուցատախտակներ	հատ	24
1.3.	Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում	հատ	50
2.	Հակահրդեհային կառուցումներ		
2.1.	Հակահրդեհային ճեղքվածքների կառուցում	կմ	6
2.2.	Հանքայնացված շերտերի կառուցում	կմ	6
2.3.	Ջրավամբարտակների կառուցում	հատ	6
2.4.	Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում	կմ	15
3.	Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում		
3.1.	Ավտոմեքենա	հատ	1
3.2.	Մոտոցիկլետ	հատ	7
3.3.	Կրակմարիչներ	հատ	40
3.4.	Օժանդակ սարքավորումներ	կոմպլեկտ	15
4.	Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում	խումբ	8

11. Էկոհամակարգային ծառայությունների գնահատում

Էկոհամակարգային ծառայությունները օգուտներ են, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից՝ բարիքների և ծառայությունների տեսքով:

Ըստ TEEB-ի (Էկոհամակարգերի և կենսաբազմազանության էկոնոմիկա, <http://www.teebweb.org/>) մեթոդաբանության՝ անտառների էկոհամակարգային ծառայությունները դասակարգվում են հետևյալ 4 կատեգորիաների (դասերի):

1) օգտակար արտադրանքի տրամադրման (ուսուլային, ապահովող/մատակարարման) ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, որոնք բնութագրում են էկոհամակարգերի կենսագործունեության նյութական և էներգետիկ արդյունքները (արգասիքները),

2) կարգավորող ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, երբ էկոհամակարգերը գործում են որպես կարգավորիչներ,

3) մշակութային (հոգևոր) ծառայություններ, ներառում է ոչ նյութական գեղագիտական, հոգևոր և ֆիզիոլոգիական բարիքները (օգուտները), որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից կամ էկոհամակարգերի հետ շփման արդյունքում,

4) նպաստող ծառայություններ - ծառայություններ, որոնք անհրաժեշտ են էկոհամակարգային մյուս ծառայությունների գործարկման (ապահովման, տրամադրման, մատուցման) համար:

Ստեփանավանի անտառունտեսության համար կատարվել է կարգավորող ծառայություններից ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում, մատակարարող ծառայություններից սննդի տրամադրման ծառայության գնահատում, մշակութային (հոգևոր) ծառայություններից էկոտուրիզմի ծառայության գնահատում:

11.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում

Ածխաթթու գազի կլանման (կլիմայի փոփոխության մեղմացման) ծառայությունը հանդիսանում է անտառի կարևորագույն կարգավորող ծառայություններից մեկը:

Անտառային էկոհամակարգերում ածխածնի պարունակության հաշվարկի ժամանակ օգտագործված են հետևյալ կատեգորիաները և բնորոշումները.

•Վերգետնյա կենսազանգված - հողի մակերեսին գտնվող կենսազանգվածն է: Այն ներառում է բունը, կոճղը, ճյուղերը, կեղևը, սերմերն ու տերևները

•Ստորգետնյա կենսազանգված - հողի մակերեսից ներքև գտնվող կենդանի արմատների ամբողջ կենսազանգվածն է: Չեն հաշվում շմշկութական արմատները, քանի որ դրանք հնարավոր չեն փորձնական եղանակով տարբերել հողի օրգանական նյութից կամ անտառային թափվածքից

•Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված - ամբողջ անկենդան բնափայտային կենսազանգվածն է առանց անտառային թափուկի, կամ այն հաշվում է որպես չորացած կամ տապալված թափուկ, որը հողի վրա է կամ ծածկված է հողի շերտով: Չորացած կամ տապալված բնափայտը ներառում է հողի մակերեսին գտնվող բնափայտը, մեռած արմատները և 10սմ և ավելի տրամագծով կոճղերը.

• Անտառային թափուկ - 10սմ-ից պակաս տրամագծով բնափայտի անկենդան կենսազանգվածում, որը գտնվում է քայլայման տարրեր փուլերում, հանքային կամ օրգանական հողի մակարդակում: Այս կատեգորիայի մեջ են մտնում անտառային թափուկը, հումուսային և գոլորշառաջացնող շերտերը:

Կենսազանգվածի պաշարը և ածխածնի կուտակումը գնահատվել է կլիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող միջազգային խմբի կողմից մշակված ձեռնարկում առաջարկված մեթոդոլոգիական ցուցումների համաձայն (www.fao.qrg/fqrestry): Բների, վերգետնյա և ստորգետնյա կենսազանգվածի հաշվարկման համար օգտագործվել են կենսազանգվածի հաստատուն նշանակությունները և արմատ/ընծոյութարաբերակցությունը:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկել ենք Ստեփանավանի անտառունտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակը, որը ներկայացվում է ստորև բերված այուսակներում(Այուսակ 28-33):

Այուսակ 9. Հրազդանի անտառունտեսության՝ ըստ գերակշռող ծառատեսակների կենսազանգվածը (2022թ.)

Տեսակը	Ծառուսի պաշարը (հազ. խմ)	Բազուսային խորհրդականություն (տ/խմ)	Բների կենսազանգվածը (հազ. տ)	Կենսազանգվածի աճման գործակիցը	Կենսազանգվածը (հազ. տ)	Արմատ/ընծոյութարաբերակցություն	Կենսազանգվածը (հազ. տ)
Սոճի	1630,35	0.538	45,11	1.4	0,23	973,53	223,91
Կաղնի	15752,62	0.57	519,70				
Բոխի	1840,65	0.64	44,74				
Թերի	117,98	0.415	2,27				
Հացի	58,66	0.648	1,66				
Կեչի	807,49	0.63	29,42				
Կաղամախի	201,28	0.557	5,55				
Լորենի	60,70	0,557	33,81				
Այլ տեսակներ	29,15	0.45	13,12				
Ընդամենը 2022թ.	1220,07		695,38				
Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված	33	0.49					16,17

Այուսակ 10 Կենդանի և անկենդան կենսազանգվածում կուտակված ածխածնի հաշվարկը

Կատեգորիա	Կենսազանգվածի պաշարը հազ. տոննա	ԲԷՊ ԿՓՄԽ գործակիցը	Ածխածնի պարունակությունը հազ. տոննա
Վերգետնյա կենսազանգված	973,53	0,48	467,29
Ստորգետնյա կենսազանգվածում	223,91	0,47	105,24
Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված	16,17	0,46	7,44

Աղյուսակ 11 Հողում (30սմ) ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)

Հողի տիպը	Մակերեսը, հա	Ածխածնի կուտակումը՝ տոննա 1հա-ի վրա	Ածխածնի կուտակումը հազ. տոննա
ԲԱՐ հողերում	16695	38	634,41

Աղյուսակ 12 Անտառային թափվածքում ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)

Անտառի մակերեսը, հազ. հա	Ածխածնի պարունակությունը անտառային թափվածքում՝ տոննա 1հա-ի վրա (թափվածքի հաստությունը 10սմ)	Ածխածնի կուտակումը, հազ. տոննա
16,695	28,2	470,80

Աղյուսակ 13 Անտառներում կուտակված ածխածինը (2020թ)

Կատեգորիա	Ածխածնի պարունակությունը (հազ. տոննա)
Վերգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	467,29
Ստորգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	105,24
Ընդամենը՝ կենդանի կենսազանգվածում	572,53
Չորացած և տապալված բնափայտում ածխածնի պարունակությունը	7,44
Թափվածքում ածխածնի պարունակությունը	470,80
Ընդամենը անկենդան կենսազանգվածում	478,24
Հողում (30սմ խորության վրա) ածխածնի պարունակությունը	634,41
Ընդամենը ածխածնի կուտակում	1685,18

Անտառունտեսության 16695 հեկտար անտառածածկ տարածքում ածխածնի կուտակումը կազմում է մոտ 1685,18 հազար տոննա, կամ 1 հեկտարի հաշվով մոտ 100,9 տոննա:

Ածխածնի կուտակումը պայմանավորված է կենդանի կենսազանգվածի աճով, իսկ կորուստը պայմանավորված է անտառանյութի հատումներով, իրդեհներով, վնասատուների և հիվանդությունների հետևանքով կենսազանգվածի կորուստներով, ինչից և ստորգետնյա կենդանի կենսազանգվածը վեր է ածվում անկենդան կենսազանգվածի:

Ածխաթթու գագի կլանումը հաշվարկելու նպատակով որոշվում է հիմնական անտառկազմող և ուղեկցող ծառատեսակների միջին տարեկան աճը (m^3), այնուհետև, իմբ ընդունելով անտառագիտական ուսումնասիրություններից նշված ծառատեսակների բնափայտի բազիսային խտության գործակիցները, զանգվածը (կենդանի կենսազանգվածը) վերածվում է չոր նյութի (P_0): Տարբեր ծառատեսակների համար ստացված գործակիցները (բնափայտի բազիսային խտությունը) միջին կշռային մեթոդով վեր է ածվում միջին գործակից, որոշվում է ածխածնի քանակը չոր նյութում ըստ տարբեր ծառատեսակների, որից հետո միջին կշռային մեթոդով դուրս է բերվում միջինը:

Հրագրանի անտառունտեսության անտառներում տարեկան միջին աճը կազմում է մոտ 20868,75 m^3 :

Աղյուսակ 14 Տարեկան միջին աճը բատ ծառատեսակների

Տեսակը	Տարեկան միջին աճը (մ³)	Բազիսային խտությունը (տ/մ³)	Կենսազանգ վածը	ԿՓՓՄԽ (IPCC) գործակիցը	Ածխածնի կլանումը. տոննա	CԳ₂(տ)
Սոճի	1630,35	0,538	877,13	0,48	5736,90	C(տ)* 44/12
Կաղնի	15752,62	0,57	8978,99			
Բոխի	1840,65	0,64	1178,02			
Կաղամախի	201,28	0,557	112,11			
Կեչի	807,49	0,63	508,72			
Հացի	58,66	0,63	36,96			
Այլ տեսակներ	577,70	0,45	259,96			
Ընդամենը	20868,75		11951,89			

Արդյունքում ստացվում է տարեկան 5736,9 տ ածխածնի կուտակում և 21035,33 տ ածխաթթու գազի կլանում:

Անտառկառավարման պլանով նախատեսվում է նաև անտառվերականգնման միջոցառումներ՝ ընդհանուր 1269,3 հեկտարի վրա: Հաշվի առնելով նախատեսվող վերականգնման միջոցառումների բնույթը վերականգնման համար առանձնացված տարածքներում, վերգետնյա կենսազանգվածի տարեկան աճը կկազմի մոտավորապես 1.15 տ/հեկտար կամ 0.552 տ/հա ածխածին (չոր զանգվածից ածխածին կորզելու կիմայի փոփոխության մասնագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ-IPCC) սահմանած պահպանման գործակիցը 0.46 է): Համապատասխան ընձյուղ/արմատ հարաբերակցությունը 0.23 է: Ըստ այդմ, ածխածնի սեկվեստրացիայի աճը ամեն հեկտարի հաշվով կլինի $0.552 + 0.552 \times 0.23 = 0.679$ տոննա/հեկտար կամ 2.49 տ/հա ածխածնի երկօքսիդի համարժեք, եթե փոխակերպենք սա ածխածնի երկօքսիդի (0.679×44 բաժանած 12-ի):

Այսպիսով, համաձայն հաշվարկների, ածխածնի կլանման (սեկվեստրացիայի) առավելությունը 16695 հեկտար մակերեսով անտառների հաշվարկով կկազմի՝ $0.679 \times 1269,3 = 636,37$ մետրական տ. ածխածին կամ $2.49 \times 1269,3 = 3160,55$ մետրական տոննա ածխածնի երկօքսիդ:

12. Տեղեկատվություն հանրային ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ

Հիմնադրութային փաստաթղթի վերաբերյալ առաջին հանրային քննարկումները կազմակերպվել են ՀՀ Կոտայքի մարզպետարանում՝ 2022թ-ի նոյեմբերի 23-ին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահպանչներին համապատասխան։ Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2022թ-ի նոյեմբերի 3-ի, իսկ հայտարարության տեքստը և հայեցակարգային փաստաթուղթը ներկայացված են եղել մարզպետարանին՝ հանրության համար հասանելի դարձնելու և քննարկումներին շահագրգիռ հանրության մասնակցությունը ապահովելու խնդրանքով։ 1-ին հանրային քննարկումների հայտարարությունը, քննարկումների մասնակիցների ցանկը և արձանագրությունը ներառված են սույն Նախնական գնահատման հայտում՝ հավելվածի տեսքով։

13. Հավելվածներ

Հավելված 1. 1-ին հանրային քննարկումների հայտարարությունը, քննարկումների մասնակիցների ցանկը և արձանագրությունը



առաջնորդություն է:
պարզ է մասնակցել մրցության Մշտական մասնակցություն խաղողի ամենա
բարձր մասին՝ և առաջ կը գտնի ամենայն ներքությունը և առաջ կը գտնի
ամենավայրի համար առաջ կը գտնի ամենավայրի համար առաջ կը գտնի

առ առաջ կարող է լինել այսպիսի համապատճեն համապատճեն կամ առաջարկ համապատճեն:

այս հայրենիքը հայություն, հայություն ունեցած, հայություն գոյաց առ պարզություն նկատմամբ և «աշխարհ» ՓԲԸ գնդեմի զորություն առ այս համապատճեն կամ առաջարկ համապատճեն:

6 մասնաւուն կարող է լինել այսպիսի ՓԲԸ կ ենթա, նորմ 22 հայություն գումարություն, 4-րդ հայր՝ Գևորգի Դավթյան:

այսպիս մերժությունը կուտայված է Հայություն Հայություն կամ առաջարկ համապատճեն:

յե Հայութիք համար, պատ Մերժու, Խամախլությունը պարունակած է ծառայություն՝ 07-045-0553-0005, մաքսարկը գլու 420 000 ՀՀ դրամ։
Եթե Հայութիք համար, պատ Մերժու, 8-րդ փող, թիվ 121, Խամախլությունը կատարված է համար Հայութիք համար, Խամախլությունը ծառայություն՝ 07-045-0556-0005, մաքսարկը գլու 810 000 ՀՀ դրամ։
Եթե Հայութիք համար, պատ Մերժու, 8-րդ փող, թիվ 8, Խամախլությունը կատարված է համար Հայութիք համար, Խամախլությունը ծառայություն՝ 07-045-0557-0005, մաքսարկը գլու 420 000 ՀՀ դրամ։
Այս համար Հայութիք համար, պատ Մերժու, Խամախլությունը պարունակած է ծառայություն՝ 07-045-0356-0108, մաքսարկը գլու

• Խաղը Ծաղկան Խամբի, պատ Մելքոնի, Աշամուշյանից պատ Արքայի, Վահեկանի, Կապատարին Խամբից 07-045-0356-0104, (մերժություն)։
ասց՝ Ծաղկան Խամբի, Լեռ Ազգանուն, 4-րդ փող, թիվ 52, Աշամուշյանից Կապատարին Խամբի Խամբառական Խամբ Խամբառական, Կապատարին Խամբից 07-045-0356-0104, (մերժություն)։

սց Ծայրական Ասուլի, Առաջավիք քաղաք, թիվ 584, Տեղական պահպանի մասնակիություն
Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն 07-0005-0022
ՀՀ 22 օգոստի 2007 թվական:

Խամբառապետի նշումագրավայրապետի առաջցումները նշանակ 80 դրամ կազմության համար նշանագրավայրապետի վճարը, որ կատար է նման թվա օպերատորի համարապատճեն։ Մրցով համարապատճեն հայր զանազան մասնակին 4 400 համարապատճեն։ Հայրը՝ ՀՀ պատշաճ վեճաբանման միջնորդականին՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ը նշանագրավայրապետի համար զանազան (0232) 6-04-02 համարապատճեն։

Փաստաթղթի կարգը է ծանոթանակ շրջակայի նախարարության տառելական կայուն (www.onv.am), Ե. Եւսան, Ծովագետ 1/3 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Երևան Քաղաք» վայ պարբռության մասնակի և Քաղաքացիության մասից՝ օտար՝ 21/06/2014թ., ՀՀ-110-Ն համարով, առանձան կարգ 2022 թվականի նոյեմբերի 14-ին, ժամ 11:00-ին ՀՀ Հանրապետության Կոմիտասի անվան համարաշխատ օճառում մայիս կուն կունը՝ ԱՐԵՎ և ԱՐԵՎ Հանրապետության գ. Գևառի 1-ին փողոց թիվ 20 փակույթի ուղղությամբ հայոց հանրապետական մասնակի և առաջարկած համարում կառավագական պահապահ նշանագիր շրջան Քաղաքի վայ պարբռության մասնակի մասնակի հայրէ Վահագոյն

Անցած համարը՝ ՀՀ կառավագակից համապատասխան՝ հաջո՞յթ ՀՀ Կուսակից նազ,
Դ. Արքայի համար՝ Տեղապահ 7, Խոշ. +37422442550, Էլ. փոստ՝ nor-hachn-metelya@mail.ru:

Մասնակիցների ցանկ

2022թ-ի նոյեմբերի 23-ին ժամը 11:00-ին <<Կոտայքի մարզպետարանի շենքում կայացած «Հրազդանի անտառունտեսություն» մասնաելույի 2023-2032թթ կառավարման պլանի նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային ծանուցման և ըննարկումների
(1-ին փուլի հանրային ծանուցում և ըննարկումներ)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդակի անտառունտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ կառավարման պլանի
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի
վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2022թ-ի նոյեմբերի 23-ին, ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզպետարանի շենքում (հասցե՝ ք. Հրազդան, 2301, Կենտրոն թաղամաս, Վարչական շենք) տեղի ունեցած «Հրազդակի անտառունտեսություն» մասնաճյուղի 2023-2032 թթ. կառավարման պլանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 20-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թ-ի նոյեմբերի 3-ի թիվ 188 (7854) համարում:

Հանդիպմանը մասնակցում էին կառավարման պլանը մշակող ընկերության («Ռւայ Գեյ» ՍՊԸ), «Հրազդակի անտառունտեսություն» մասնաճյուղի, Կոտայքի մարզպետարանի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուսների կազմակերպման պատասխանատու ընկերության (Ի ՍԻ Ի Քառորդու ՍՊԸ), ինչպես նաև «Հրազդակի անտառունտեսություն» մասնաճյուղին հարակից բնակչավայրերի ներկայացուցիչները:

Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ Մ. Եղիազարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցվեց հանրային լուսների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Մ. Վարդանյանին:

Մ. Վարդանյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ անտառունտեսության կառավարման պլանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, համարվում է հիմնադրութային ֆաստարության և ենթակա է ռազմավարական գնահատման և փորձաքննության, որի համար նախատեսվում էն թվով 4 հանրային քննարկումներ: Այս 1-ին քննարկման նպատակն է ծանուցել հանրությանը, շահառու և ազդակիր կողմերին նախագծի մասին: Նշվեց նաև, որ հանրային լուսների հայտարարությունը հրապարակվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև ուղարկվել է մարզպետարան՝ համայնքներին իրազեկելու նպատակով: Կառավարման պլանի մշակումը պետք է իրականացվի մասնակցային սկզբունքով՝ արտացոլելու ինչպես անտառունտեսության, այնպես էլ հարակից համայնքների/բնակչության շահերը և դիրքորոշումները: Նման փոխհարաբերությունները պետք է լինեն հավասարակշռված և դրան միտված միջոցառումները ներկայացված են կառավարման պլանում: Ա.

Վարդանյանը նշեց նաև, որ անտառկառավարման պլանը իրենից ներկայացնում է տվյալ անտառունտեսության ռազմավարական գարգացման փաստաթուղթ, որտեղ նշվում են առաջիկա 10 տարվա ընթացքում նախատեսվող հնարավոր փոփոխությունները, գևահատվում է առկա փաստացի վիճակը, տրվում են զարգացման ուղղությունները, իրականացվում է անտառօնահատում, գույքագրում, անտառօգտագործման ծավալների հաշվարկ, սահմանների ճշգրտում, մակերեսների ճշգրտում և այլ բազմաթիվ ուսումնասիրություններ, ներառյալ սոցիալական: Մ. Վարդանյանը հակիրձ ներկայացրեց կառավարման պլանի մշակման նախազծի պատվիրատու և իրականացնող կողմերը, ինչպես նաև հիմնական տվյալները և դրանում ներառված միջոցառումները: Նշվեց որ, դեռ 2022 թ-ի սկզբին կառավարման պլանի մշակող կազմակերպությունը կազմակերպել էր հանդիպումներ-ըննարկումներ ինչպես անտառունտեսության, այնպես էլ հարակից համայնքների ներկայացուցիչների հետ: Այնուհետև Մ. Վարդանյանը հորդորեց ներկաներին արտահայտել իրենց մտահոգություններն ու բարձրաձայնել իրենց հետաքրքրող հարցերը:

Ծաղկաձոր համայնքի ներակայացուցիչ Գ. Առաքելյանը մտահոգություն հայտնեց, որ անտառունտեսությունը Ծաղկաձորի մոտակայքում անտառային հողեր է տալիս վարձակալությամբ, որտեղ կառուցվելու են քոթեզներ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ անտառի վրա և համայնքը դեմ է այդ վարձակալության փաստին:

Անտառունտեսության ներկայացուցիչ Ս. Մարգարյանը նշեց, որ վարձակալությունը ինքնակամ գործողություն չէ, այդ կապակցությամբ իրականացվել են ըննարկումներ համայնքում և համայնքը կարող է իր դիրքորոշումը հայտնել:

Ներկաները քննարկեցին անտառների վիճակը և անտառային տարածքների վարձակալությամբ տրման խնդիրները:

Նշվեց, որ քննարկվող թեման առանձին հարց է, որը ենթադրում է առանձին քննարկումներ և չի վերաբերում սույն հանրային քննարկումներին, այդ հարցը պետք է լուծվի այլ հարթակում:

Մ. Մարգարյանը անդրադարձ անտառկառավարման պլանի կարեւորությանը ընդհանուր ռեսուրսների կառավարման տեսանկյունից և ողջունեց նախագիծը: Նշվեց նաև, որ կառավարման պլան մշակող կազմակերպությունը իրականացրել է սահմանների ճշգրտումն աշխատանքներ, բոլոր սահմանները քննարկվել են նաև համայնքների ներկայացուցիչների հետ և բոլոր անհամապատասխանությունները ներկայիս կադաստրային քարտեզների հետ նշվել են նախագծում: Անհամապատասխանությունների ճշգրտումն հետագա գործընթացը պետք է կազմակերպվի արդեն ՀՀ կառավարության, Հայաստան ՊՈԱԿ-ի և կադաստրի մակարդակով:

Ներկաները քննարկեցին քարտեզների անհամապատասխանությունից բխող հնարավոր խնդիրները, ներառյալ ապօրինի ծառահատման համար պատասխանատունների հարցը:

Ս. Եղիազարյանը նշեց անտառանտեսության և համայնքների միջև սերտ համագործակցության կարևորությունը:

Գ. Հարությունյանը նշեց, որ համայնքների ղեկավարներն ունեն իրենց առաջարկները, որոնք ներկայացված են փաստաթղթում և կներկայացվեն համապատասխան մարմիններին:

Այնուհետև քննարկում ծավալվեց կադաստրային քարտեզների ճշգրտման խնդիրների և համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ:

Այլ հարցեր չհնչեցին, Ս. Եղիազարյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար և ամփոփելով քննարկումների արդյունքները, ավարտեց հանդիպումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ՝

Ս. Եղիազարյան

Քննարկումների արձանագրող՝

«Ի ՄԻ Ի Քառագուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Գ. Հարությունյան

Զետեարկողի ներկայացուցիչ՝

«Ուայշ Գեյք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Գ. Հարությունյան

Հավելված 2. Քարտեզագրական նյութեր և արբանյակային պատկերներ (քարտեզագրական նյութերի և արբանյակային պատկերների ծավալներով և ֆորմատով պայմանավորված, դրանք ներկայացվում են էլեկտրոնային կրիչով՝ կից լրամշակված ՆԳՀ-ին որպես Հավելված 2)